

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՆՇՈՒԵՑԱԲ Ս.Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ 125-ԱՄԵԱԿԸ

## ՆԱԽԱԳԱՐ ՊԱՐԱՔ ՕՊԱՄԱ ՎԵՐՈՆՏՐՈՒԵՑԱԲ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՅԱՆԳՆԵՐՈՒ ՆԱԽԱԳԱՐ



ՄԴՀԿ 125-ամեակի առթիւ Երեւանի մէջ կայացած հանդիսութեան ընթացքին. Ձախէն աջ՝ նախարար Հրանդ Յակոբեան, Վարչապետ Տիգրան Սարգսեան, ԸՆԿ. Սեդրակ Անէմեան եւ ԸՆԿ. Վազգէն Գալթաթեան



Յաղթանակէն ետք Պարաֆ Օպամա եւ Ճօ Պայտըն իրենց տիկիներով

Շաբաթ, Նոյեմբեր 3-ին, Հայաստանի կառավարութեան նիստերու դահլիճը ակնատես դարձաւ Հայ ժողովուրդի պատմութեան առաջին քաղաքական կազմակերպութեան՝ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան հիմնադրութեան 125-ամեակին նուիրուած հանդիսաւոր նիստին:

Մայր կուսակցութեան գործունէութիւնը ողջունելու նպատակով սրահ ժամանած էին Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսեան, Սփիւռքի նախարար Հրանդ Յակոբեան, Հնչակեան կուսակցութեան կեդրոնական վարչութեան ատենապետ ԸՆԿ. Սեդրակ Անէմեան, անդամներ Վազգէն Գալթաթեան եւ Վահան Շիրիանեան, կուսակցութեան Հայաստանի եւ Սփիւռքի մասնաճիւղերու եւ

կառույցներու պատասխանատուները, քոյր կուսակցութիւններու ներկայացուցիչները, կուսակցական ընկերներ եւ բարեկամներ:

Տէրունական աղօթքով շնորհաւորական խօսք ուղղեց Մեծն Բրիտանիոյ հայոց թեմի առաջնորդ Նաթան արք. Յովհաննիսեանը:

Սփիւռքի նախարար Յակոբեան ընթերցեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի շնորհաւորական ուղերձը, որուն մէջ նախագահը առանձնացուց կուսակցութեան ունեցած ուրոյն դերը՝ Հայաստանի ազատագրական պայքարին մէջ:

Ելոյթով հանդէս եկաւ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսեան, որ կարեւորեց Հնչակեան կուսակցու-

Շարք էջ 5

նորական ձայներ:

Նոյեմբեր 5-ին տեղի ունեցած Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահական ընտրութիւններուն տպաւորիչ յաղթանակ արձանագրեց Դեմոկրատ Պարաֆ Օպամա, երկրորդ շրջանի մը համար վերընտրելով իր պաշտօնին:

Օպամայի յաղթանակը ջախջախիչ պարտութիւն էր, ոչ միայն Հանրապետական կուսակցութեան թեկնածու՝ Միթ Ռամսֆիլդի համար, այլ ամբողջ այդ կուսակցութեան, որ չորս տարի անխնայ պայքար մղեց Պարաֆ Օպամայի անձին դէմ, կասկածի տակ առնելով նոյնիսկ անոր օրինական նախագահ ըլլալը:

Պարաֆ Օպամա եւ իր փոխ նախագահ Ճօ Պայտըն առանց մեծ դժուարութեան յաղթահարեցին անհրաժեշտ 270 ընտրական ձայներու պատնէշը, ստանալով 332

Ռւշ երեկոյեան, Նախագահ Օպամա ելոյթ ունենալով հազարաւորներու առջեւ, գնահատական խօսքեր ուղղեց Միթ Ռամսֆիլդին, ու գործակցութեան ձեռք երկարեց Հանրապետականներուն՝ միասնաբար լուծելու համար երկրի դիմադրուած տնտեսական դժուարութիւնները:

Նոյն օրը տեղի ունեցած Գոնկրէսի ընտրութիւններուն, Դեմոկրատները պահեցին Մերակոյտէն ներս իրենց մեծամասնութիւն, իսկ Ներկայացուցիչներու Տունը մնաց Հանրապետականներու ձեռքը:

### ՀՀ ՆԱԽԱԳԱՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՍԴՐԿ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ՀԵՏ

Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեան Նոյեմբեր 5-ին ընդունեց Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան կեդրոնական վարչութեան ատենապետ ԸՆԿ. Սեդրակ Անէմեանին:

Նախագահը ողջունեց հայրենիքի մէջ եւ դուրս կուսակցութեան գործունէութիւնը, շնորհակալութիւններ արտայայտեց Սարգսեան բարձր գնահատեց Հնչակեան կուսակցութեան պատմական դերակատարութիւնը հայապահպանութեան, համազգային ինդիւրներու լուծման, Հայաստանի հզօրացման եւ զարգացման ու Սփիւռք-Հայաստան կապերու ամրապնդման գործին մէջ:

Ընկ. Անէմեան հաստատեց, որ Հնչակեան կուսակցութիւնը, ինչպէս միշտ, պիտի մնայ հայ ժողովուրդի եւ Հայոց պետականութեան կողքին:

### ՀԱՆ-Ի ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԹԻ

Նոյեմբեր 5-ին Միացեալ Նահանգներու տարածքին տեղի ունեցած ընտրութիւններուն առթիւ, ՄԴՀԿ Հայ Ամերիկեան Խորհուրդը (ՀԱԽ) հրապարակեց յայտարարութիւն մը, ողջունելով իր պաշտպանած թեկնածուներու յաղթանակը:

ՀԱԽ-ի յայտարարութեան մէջ յատկապէս ըստուած է,- «Հպարտ ենք յայտարարելու Ամերիկայի 44-րդ նախագահ Պարաֆ Օպամայի պատմական յաղթանակը եւ ՀԱԽ-

ի գորակցութիւնը վայելող բազմաթիւ այլ թեկնածուներու յաղթանակը:

«Մերակոյտական Տայէն Ֆայնսթայն, Ամերիկահայ Գոնկրէսականներ ձէքի Սփիւռք եւ Աննա Աշու, գոնկրէսականներ Ատամ Շիֆ եւ Մաքսին Ուոթըրս, որոնք Հայ համայնքի երկար տարիներու բարեկամներն են, յաղթանակ տարին իրենց մրցակիցներուն նկատմամբ:

Շարք էջ 4

## ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ 125-ԱՄԵԱԿԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ԿԻՐԱԿԻ ՆՈՑԵՄԲԵՐ 18, 2012 ԵՐԱԿՈՑԵԱՆ ԺԱՄԸ 5.00-ԻՆ GLENDALE HIGH SCHOOL AUDITORIUM ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ

### ՄԻԱԿ ԹԵՉԵՐ

#### ԱՐԱՄ ԱՐԲԱՀԱՄԵԱՆ

Ես համաձայն եմ, որ Հայաստանում շարունակվում են քաղաքական հետապնդումները՝ թէև ոչ այն ծավալով, ինչպես առաջ էր: Համաձայն եմ, որ մեր իշխանաւորների ճնշող մեծամասնութիւնը կողմնակալացուած է, իրենց ոլորտում կոմպետենտ չէ, իսկ նրանց վարքը լիարժեք է եւ ամբարտաւան: Համաձայն եմ նաեւ, որ շարունակուող արտագաղթը, 20 տարում գումարուելով, հասցրել է մեր ժողովրդագրական վիճակը վտանգաւոր եզրագծի: Բայց այդ մարտահրաւերներին դիմագրաւելու համար պէտք է փորձել ճշգրիտ ներկայացնել իրավիճակը եւ խուսափել սխալ, թէկուզեւ քարոզչութեան տեսանկիւնից գրաւիչ պնդումներից: Ահա, իմ կարծիքով, դրանցից մի քանիսը:

1. Մենք հիմա ապրում ենք բռնապետութեան պայմաններում: Բաւական է թուուցիկ հայեացք գցել մեր խորհրդարանի, եթերի, լրատուամիջոցների, փողոցային ակցիաների վրայ՝ համոզուելու համար, որ դա այդպէս չէ: Բռնապետութեան ժամանակ ոչ մէկին չի թոյլատրուում հրապարակաւ, պաշտօնապէս ընդունուած եւ գրանցուած խողովակներով արձանագրել այդ փաստը: Հեռու չգնալու համար բերեմ հարեւանների օրինակը. դուք յաճախ էք կարդում, ասենք, ատրպէյճանական որեւէ կայքում այնտեղի քաղաքական գործչի յայտարարութիւնը, թէ Ատրպէյճանում հաստատուել է բռնապետական ռեժիմ, ինչը մեզ մօտ հնչում է օրը մի քանի անգամ: Լսե՛լ էք դուք արդեօք ատրպէյճանական Միլի-մեջլիսի ամպիոնից ելույթներ, որոնք գոնէ մի քիչ նման լինեն մեր ընդդիմադիրների ելույթներին: Իհարկէ,

կարելի է առարկել, որ Հայաստանում այդ ելույթներն ու հրապարակումները իշխանութեան համար առանձնապէս վտանգաւոր չեն: Դա միանգամայն ճիշդ առարկութիւն է, բայց ո՞վ է դրանում մեղաւոր: Մի՞թէ միայն իշխանութիւնները:

2. Ժողովուրդը ցանկանում է ապրել արդար, օրինական, ժողովրդավարական երկրում: Եթէ ցանկանար՝ կ'ապրէր, հեղեղի պէս կոչնչացնէր այդ ճանապարհին բոլոր խոչընդոտները: Իրականում մարդիկ ուզում են լաւ ապրեն՝ անհոգ, բարեկեցիկ, ուզում են արդարութիւն միայն իրենց համար, իսկ ուրիշների նկատմամբ անարդարութիւնը նրանց չի չուզում: Ուզում են, մի խօսքով, այս համակարգի մէջ գտնեն իրենց համար ցանկալի տեղը, եւ երբ չեն գտնում, դժգոհում են, փնթփնթում՝ ոչ աւելին:

3. Ընդդիմադիր կուսակցութիւններն այլընտրանք են առաջարկում այն լուծումներին, որոնք որդեգրել է իշխանութիւնը: Եթէ առաջարկէին, վաղուց արդէն իշխանափոխութիւն կը լինէր: Պարզագոյն օրինակ. 20 տարի ընդդիմութիւնն ասում է՝ եթէ կրճատուի ստուերը, մարդկանց աշխատավարձը կը բարձրանայ: Բայց դա լուծում չէ՝ այդքանը, ներեցէք արտայայտութեանս, տասս էլ գիտի: Բայց այս 20 տարում իրար յաջորդող կառավարութիւններն այդպէս էլ ստուերը չկրճատեցին: Ով որ երէկ դա չէր կարողանում անել, այսօր կշտամբում է ներկայիս կառավարութեանը, թէ ինչու ստուերը չէք կրճատում: Այստեղից հետեւութիւն. ոչ ոք իրականում չգիտի, թէ ինչ պէտք է անել: Ուստի եւ սահմանափակում է քաղաքական կամ քի մասին ոչինչ չպարտադրող բառերով:

«ԱՌԱՒՕՏ»

### ԲՅԿ-Ի ԲԱՐՈՅԱԿԱՆ ՕՐԻՆԱԿԸ

#### ՅԱԿՈՐ ԲԱԴԱԼԵԱՆ

Բարգաւաճ Հայաստան կուսակցութիւնը Գագիկ Ծառուկեանին պատկանող կոնեակի գործարանում քաղխորհրդի հերթական նիստն է անցկացրել: Թէ ինչ հարցեր են եղել օրակարգում եւ ինչ որոշումներ է կայացրել ԲԶԿ-ի, յայտնի չէ: Ուշագրաւ է, որ ԲԶԿ այդ նիստը, որն ըստ որոշ տեղեկութիւնների, բաւականին ընդլայնուած կազմ է ունեցել, տեղի է ունենում ՀՀԿ գործկոմի նիստից եւ Յովիկ Աբրահամեանին ՀՀԿ նախընտրական շտաբի պետ նշանակելու որոշումից յետոյ:

Ինչպէս յայտնի է, Յովիկ Աբրահամեանը Գագիկ Ծառուկեանի խնամին է, նաեւ մարդ, ով Ծառուկեանին յամառօրէն փորձում է համոզել սատարել Սերժ Սարգսեանին: Չի բացառուում, որ ԲԶԿ-ն էլ ներկայում կը սկսի Յովիկ Աբրահամեանին յամառօրէն համոզել, որ նա Ծառուկեանին սատարի, ասենք աւելի ջանադրաբար, քան Մայիսի 12-ի խորհրդարանական ընտրութեանը: 6 ամիս առաջ Յովիկ Աբրահամեանը կարողացաւ Գագիկ Ծառուկեանի համար յաղթանակ ապահովել հայրենի Արարատի մարզում, ինչպէս նաեւ Շիրակում, որտեղ Աբրահամեանի գործընկերը Գիւմրիի «օդիոգ» քաղաքապետ Վարդան Ղուկասեանն էր:

Ըստ երեւոյթին, պատահական չէր, որ երբ Ղուկասեանի հարցերը լուծուեցին, նա իր շփումներն իրականացնում էր Յովիկ Աբրահամեանի միջոցով, ում հետ գործարքի կամ ում յորդորով էլ թերեւս ապահովել էր Գիւմրիում ու Շիրակում ԲԶԿ-ի շօշափելի յաղթանակը: Վարդան Ղուկասեանն ըստ երեւոյթին Յովիկ Աբրահամեանից բացատրութիւն էր պահանջում, թէ ինչպէս եղաւ, որ այդ յաղթանակի համար ստիպուած է այդքան թանկ վճարել: Ի դէպ, Վարդան Ղուկասեանին այդ առումով կարող է շատ լաւ հասկանալ մէկ այլ Վարդան՝ Օսկանեանը, ով խորհրդարանում իր հարցի քննարկման ժամանակ յայտարարեց, որ Յովիկ Աբրահամեանի հետ հանդիպումից յետոյ իրեն խաբուած է զգում: Չի բացառուում օրինակ, որ Վարդան Օսկանեանի այդ խաբուածութեան զգացումի դիմաց էլ ՀՀԿ նախընտրական շտաբի պետ Յովիկ Աբրահամեանից խնամի Գագիկ Ծառուկեանը պահանջի, որ ասենք նախագահի ընտրութեանը ԲԶԿ-ի համար յաղթական մարզերը լինեն ոչ թէ երկուս, այլ առնուազն երեք-չորսը:

Այս իմաստով, ԲԶԿ խորհրդակցութեան մէջ ըստ էութեան ամենակարեւորն ու ուշագրաւը հենց գեղեցիկ ու նոր հայկական աւանդույթն է քաղաքական դաշտում, որ բերում Բարգաւաճ Հայաստան կուսակցութիւնը՝ խորհրդակցութիւններ սեփականատիրոջ գործարանում:

Այլ կերպ ասած, ԲԶԿ-ն սրանով քաղաքական դաշտ է բերում ազնուութիւնն ու անկեղծութիւնը, որպէս արդի քաղաքական մշակույթ: Բանն այն է, որ Հայաստանի քաղաքական կուսակցութիւններն ըստ էութեան ոչ թէ քաղաքական, այլ գոտ տնտեսական կառույցներ են, որոնք նաեւ քաղաքական առեւտրով են զբաղւում: Այդ իմաստով, ԲԶԿ-ն թերեւս առաջինն է, որ քաղաքական արարողակարգն իրա-

կանացնում է կուսակցական բնոյթին համապատասխան վայրում՝ ձեռնարկութիւնում, տուեալ դէպքում կոնեակի գործարանում:

Բանն այն է, որ կուսակցութիւնը Գագիկ Ծառուկեանի կապիտալի մի մասն է, այսինքն նրա գլխաւորած Մուլտի կոնցեռնի մի մասը, հետեւաբար կուսակցական միջոցառումներն էլ պէտք է անցնեն այն միջավայրում, որտեղ Գագիկ Ծառուկեանը Մուլտի կոնցեռնի գործերով է զբաղւում:

Շատ լաւ կը լինի, որ ԲԶԿ-ի լատենտ ազնուութեան եւ անկեղծութեան մշակույթին միանան նաեւ հիմնական միւս քաղաքական ուժերը եւ իրենց քաղաքական ակտերն իրականացնեն ոչ թէ այսպէս ասած ֆորմալ քաղաքական ինստիտուտներում՝ կուսակցական գրասենեակ, կամ խորհրդարան, կառավարութիւն, այլ ոեւէ մէկի սեփականութիւնը հանդիսացող օբիեկտում: Այդ իմաստով, շատ աւելի օրգանական է, երբ քաղաքական որոշումները Հայաստանում կայացոււմ են օրինակ ռեստորանում, քան որեւէ պետական կառույցում:

Օրինակ, ազգային անվտանգութեան խորհրդի նիստերը պէտք է իրականացնել ԱԽ քարտուղարի կոնեակի գործարանում: ՀՀԿ խմբակցութեան նիստերը պէտք է անցկացնել ասենք Սամուէլ Ալեքսանեանի Երեւան-Սիթի սուպերմարկետների ցանցում կամ Ռուբէն Հայրապետեանի Հարսնաքար ռեստորանում:

Այդպէս գոնէ ամէն ինչ կը գայ ներդաշնակութեան առաւելագոյն մակարդակի, ինչն արդէն իսկ աւելի բարոյական է, քան առկայ իրավիճակը, այն պարզ տրամաբանութեամբ, որ ինչ բնական է՝ բարոյական է:

«ԼՐԱԳԻՐ»

### ՆՈՐ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԿԱՐԻՔ

#### ԱՐՄԻՆԷ ՕՀԱՆԵԱՆ

Ընդունենք՝ արդէն Փետրուարի 10-ն է, եւ ընտրութիւններին մնացել է հազիւ մէկ շաբաթ: ՀՀ նախագահի թեկնածու են առաջարկուել գործող նախագահը, Պարոյր Հայրիկեանը, Տիգրան Կարապետիչը, Րաֆֆին ու մի խումբ «էպոսագետներ»: Մեծ հաշուով՝ այլընտրանքի բացակայութիւն: Արդիւնքում՝ քուէարկութեան մասնակիցների աննախադէպ քիչ քանակ: Սերժ Սարգսեանը նախագահ է ընտրուում 78 կամ 88 տոկոս ձայներով, նրա մերձակալ մրցակիցը հաւաքում է 1,5 տոկոս:

Ի՞նչ է խօսում սա մեր երկրի ու հասարակութեան մասին: Նախեւառաջ այն, որ մենք հետեւողականօրէն, քայլ առ քայլ ոչնչացրել ենք ընտրական համակարգը եւ վերադարձել սովետական «հին-բարի» աւանդույթներին: Երբ ընտրութեան էր դրուում մէկ թեկնածու: Սա նաեւ վկայում է այն մասին, որ մենք պայքարի հակուած ժողովուրդ չենք՝ ցանկացած ճնշման ու պարտադրանքի դէպքում անմիջապէս յանձնոււմ ենք ու յարմարոււմ ստրուկի կար-

գավիճակին: Իսկ ստրուկներին, համաձայնէք, ոչ միայն չեն սիրում, այլեւ նրանց ոչ մի լաւ բան չի սպասուում:

Սա խօսում է նաեւ այն մասին, որ մեր իշխանաւորները, էլիտան ու մտաւորականութիւնը ոչ մի բանի պիտանի չեն՝ ծախուեն, յարմարուող, պնակալէզ ու բռնակալ: Մի խօսքով, Հայաստան երկրի շատ տխուր եւ հիասթափեցնող տեսարան է ուրուագծուում: Բնականաբար, հարց է ծագում՝ ո՞ւմ է ձեռնառնում նման իրավիճակը: Հասարակութեանն ու ժողովրդի՞ն. հաստատ՝ ոչ, քանի որ անագատ հասարակութիւնը յարգանքի արժանի չէ, անհեռանկար է ու անապագայ: Իշխանութիւններին կարծում եմ՝ նոյնպէս ոչ, քանի որ անգամ եթէ դու 90 տոկոսով նախագահ ես ընտրուել, դա խօսում է ոչ թէ քո անգերազանցելիութեան, այլ այն բանի մասին, որ երկիրը վերածել էս թուրքմենստանի եւ դու թուրքմենբաշի ես դառնել: Այնպէս որ, մեզ բոլորիս նոր եւ լուրջ նախագահի թեկնածուներ են հարկաւոր:

«ՀՐԱՊԱՐԱԿ»

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏԻԱԿԱՆ ՀՆՁՄԱԿԵԱՆ  
 ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ  
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի  
 ԽՄԲԱԳԻՐ՝  
 ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆԵԱՆ  
 ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ  
 ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ  
**MASSIS Weekly**  
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104  
 Phone: (626) 797-7680  
 Fax: (626) 797-6863  
 E-Mail: massis2@earthlink.net  
 http://www.massisweekly.com  
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)  
 Published Weekly  
 Except Two Weeks in August  
 ANNUAL SUBSCRIPTION RATES:  
 USA \$50.00, \$80.00 (First Class)  
 Canada \$125.00 (Air Mail)  
 Overseas \$225.00 (Air Mail).  
 All payments must be made in US funds & Drawn on US banks.  
 Periodicals Postage Paid at Pasadena CA.  
 Please Send Address Change To MASSIS WEEKLY

**ՐԱՅԱՍԱՆ**

**ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ.- «2013 ԹՈՒՎԿԱՆԸ ԵՍ ԻՆՉ ՎՐԱՅ ՊԵՏՔ Է ՎԵՐՑՆԵՄ»-**

Նախագահի թեկնածու առաջադրուելուց յետոյ Րաֆֆի Յովհաննիսեանը պատրաստ է սկսուած պայքարը հասցնել տրամաբանական աւարտին:

Այս մասին յայտարարեց «Ժառանգութիւն» կուսակցութեան հիմնադիր եւ առաջնորդ Րաֆֆի Յովհաննիսեանը՝ պատասխանելով «Ազատութիւն» ռադիոկայանի հարցին, որ եթէ իր թեկնածութեան շուրջ հասարակական եւ քաղաքական ուժերի համախմբում չլինի, արդեօք դուրս կը գա՞ ընտրապայքարից եւ կը սատարի մէկ այլ թեկնածուի: Յովհաննիսեանը ասաց, որ այս շրջանում հանդիպել է մօտ 100 քաղաքական գործիչներին, քաղաքացիական ակտիւիստներին, երիտասարդներին հետ՝ փորձելով պարզել նրանց տեսակէտը եւ նրանց թեկնածուն դառնալու պատրաստակամութիւնը:

«Բայց ցաւօք, եւ միգուցէ բնականաբար, շատերը թուաբանական հաշուարկ են անում եւ նայում են դէպի 2018 թուական: Ի՞նչ օգուտ հիմա, դա ինձ համար հասկանալի է, դրա համար ես ժամանակից շուտ այն եզրակացութեան եկայ, որ 2013-ը թուականը ես ինձ վրայ պէտք է վերց-

նեմ, եւ այնպիսի դաշտ ստեղծենք, որ 2018-ին ընդառաջ ունենանք ազատ, արդար ընտրութիւններին յարիր քաղաքական վիճակ Հայաստանում», - ասաց Յովհաննիսեանը:

Հարցին, թէ արդեօք սա նշանակում է, որ նախընտրական շրջանում ինչ-որ մի պահի չի հանի իր թեկնածութիւնը, Յովհաննիսեանը պատասխանեց. - ««Ժառանգութիւն» իր համագումարը կ'անի Դեկտեմբերի 15-ին, ես յայտարարել եմ իմ մտադրութեան մասին՝ մասնակցելու նախագահական ընտրութիւններին եւ այդ պայքարը տանել մինչեւ իր տրամաբանական աւարտը, մինչեւ այն ինչ, որ ես ակնկալում եմ կը լինի յաղթանակ: Եթէ Դեկտեմբերի 15-ին ուրիշ վիճակ է, մենք միասին կը դիտարկենք»:

Յովհաննիսեանն ասաց, թէ իր եւ գործող նախագահ Սերժ Սարգսեանի միջեւ կ'ընթանայ անհաւասար, բայց միեւնոյն ժամանակ յաղթահարելի մրցակցութիւն. դրա համար Հայաստանի շարքային քաղաքացիները պէտք է գիտակցեն, որ եթէ կրկին ունենան ոչ թէ ղե իւրէ ընտրուած նախագահ, այս դա երկիրը տանելու է փակուղի:

**ԲԱԳՐԱՏԵԱՆ. «ՀԱԿ-ՈՒՄ ՈՐՈՇ ՄԱՐԴԻԿ ՇՏԱՊՈՒՄ ԵՆ ԲՀԿ-Ի ՅԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՌՈՒՄՈՎ»**

Հայ Ազգային Կոնգրէսում (ՀԱԿ) որոշ մարդիկ շտապում են «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան (ԲՀԿ) հետ համագործակցութեան առումով: Նման յայտարարութիւն արեց Ազգային ժողովում ՀԱԿ խմբակցութեան անդամ Հրանդ Բագրատեանը՝ լրագրողներին հետ հանդիպմանը պատասխանելով «Ազատութիւն» ռադիոկայանի հարցին, թէ ՀԱԿ-ում, այնուամենայնիւ, ի՞նչ դիրքորոշում կայ ԲՀԿ-ի հետ համագործակցութեան առումով:

Վերջերս «Ազատութիւն» ռադիոկայանի հետ գրոցում Կոնգրէսի խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանը յայտարարել էր, թէ այսօր Սերժ Սարգսեանին մարտահրաւէր նետելու ունակ երկու խոշոր քաղաքական ուժ կայ՝ «Բարգաւաճ

Հայաստան»-ը եւ ՀԱԿ-ը, որոնք կարող են համախմբուել երկրում ժողովրդավարական կարգեր հաստատելու, բիզնեսը քաղաքականութիւնից տարանջատելու համար: Մինչդեռ աւելի ուշ ՀԱԿ խմբակցութեան անդամ Նիկոլ Փաշինեանը կարծիք չայտնեց, որ դա ոչ թէ Կոնգրէսի, այլ Զուրաբեանի անձնական տեսակէտն է:

«Ինձ [Հայ Ազգային Կոնգրէսում] ասել են, որ «Բարգաւաճ Հայաստան»-ի հետ առանձնապէս բան չկայ՝ մարտավարութեան հարցերն են: Բայց մարտավարութիւն մարտավարութիւն, ես տեսնում եմ, որ շատ մարդիկ հենց սկսում են խօսել, անպայման սկսում են «Բարգաւաճ»-ից, եւ չեմ էլ բացառում, որ տակը բան էլ չկայ», - ասաց Հրանդ Բագրատեանը:

**«ՀԱՅԱՍՏԱՆԸ ՅԵՌՈՒ Է ԽՕՍՔԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԱՌՈՒՄՈՎ ԱՌԱՋԱՏԱՐ ԴԱՍՈՒԵԼՈՒՑ»**

«Ասել, թէ ներկայումս Հայաստանում խօսքի ազատութեան առումով բարեւոք վիճակ է, այնքան էլ ճիշդ չէր լինի, թէ եւ եթէ համեմատում ենք նախընթաց շրջանների հետ, իհարկէ, կարող ենք որոշակի առաջընթաց արձանագրել», - մեկնաբանելով նախագահ Սերժ Սարգսեանի՝ Հայաստանում խօսքի ազատութեան ոլորտում տեղի ունեցած լուրջ առաջընթացի մասին յայտարարութիւնը՝ ասաց Խօսքի ազատութիւն պաշտպանութեան կոմիտէի (ԽԱՊԿ) նախագահ Աշոտ Մելիքեանը:

Նոյեմբերի 3-ին Սերժ Սարգսեանը հանդիպում էր ունեցել Հանրային խորհրդի անդամների հետ, որի ընթացքում այլ հարցերի թւում անդամարձել էր Հայաստանում խօսքի ազատութեան վիճակին:

«Լուրջ առաջընթաց ունենք խօսքի ազատութեան բնագաւառում. մեզ յաջողուեց այս հարցում առաջ անցնել շատ ու շատ երկրներից, այդ թւում եւ զարգացած երկրներից: Մի բան, որով կարելի է հպարտանալ, եւ որը պէտք է ամէն զնով պահպանել», - ասել էր Սերժ Սարգսեանը:

Մելիքեանը ասում է. - «Իհարկէ, եթէ համեմատենք սովետական ժամանակաշրջանի հետ, աւելի բարձր մակարդակ է, բայց մենք դրա հետ երեւի պէտք է համեմատենք: Եթէ համեմատենք նախորդ նախագահի շրջանի հետ, այո, այստեղ պէտք է որոշ առաջընթաց արձանագրենք, որովհետեւ նախորդ նախագահը փակում էր այն լրատուամիջոցը, որի եթերային բովանդակութիւնը չէր համապատասխանում պաշտօնականին»:

**«ԵԹԷ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԸ ՉԱՌԱՋԱԴՐՈՒԻ, ՊԵՏՔ Է ՅԵՌԱՆԱՅ»**

Հայ Ազգային Կոնգրէսի քաղխորհրդի նիստում միայն քննարկուել է այն հարցը, թէ արդեօք Աժ ՀԱԿ խմբակցութիւնն իրաւունք ունի համագործակցելու խորհրդարանական այլ ուժերի, այդ թւում՝ ԲՀԿ խմբակցութեան հետ: Այս մասին լրագրողներին հետ հանդիպմանն ասաց ՀԱԿ կազմում գտնուող «Քրիստոնեայ-ժողովրդական վերածնունդ» կուսակցութեան նախագահ Սօս Գիմիշեանը՝ նշելով, որ միայն որոշուել է, որ մանդատները վերցրած ՀԱԿ գործիչները պարտաւոր են համագործակցել խորհրդարանական գործընկերների հետ:

Սակայն, ըստ Գիմիշեանի, ՀԱԿ քաղխորհուրդը չի որոշել, որ նախագահական ընտրութիւնների նախաշեմին ՀԱԿ-ն ու ԲՀԿ-ն պէտք է համագործակցեն: Ըստ Գիմիշեանի՝ եթէ անգամ մէկ կուսակցութիւն դէմ լինի այդ համագործակցութեանը, ապա դա արդէն չի լինի ՀԱԿ որոշումը: Նա յիշեցրեց, որ ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանը հանրահաւաքներից մէկի ժամանակ յայտարարել է, որ այդ հարցում ՀԱԿ-ում կենսական չկայ: Այդ դէպքում, ինչու՞ են ՀԱԿ անդամներ Լեւոն Զուրաբեանն ու Արամ Մանուկեանը հակառակ յայտարարութիւններ անում, Սօս Գիմիշեանը նշեց, որ Կոնգրէսի քաղխորհրդի նիստում կը ճշդեն դա:

Ինչ վերաբերում է Արամ Մանուկեանի այն յայտարարութեանը, որ ՀԱԿ-ը պատրաստ է համագործակցել ցանկացած ուժի, այդ թւում՝ սատանայի հետ, միայն թէ հասնի իշխանափոխութեան, ապա Սօս Գի-



«Քրիստոնեայ-ժողովրդական վերածնունդ» կուսակցութեան նախագահ Սօս Գիմիշեան

միշեանը պատասխանեց. «Ես կողմնակից եմ նրան, որ նպատակը չի արդարացնում միջոցները: Սատանայի հետ չի կարելի համագործակցել եւ այս իշխանութիւնից ազատուել, որովհետեւ իշխանութիւնն աւելի լաւ է, քան սատանան»:

Սօս Գիմիշեանը նաեւ նշեց, որ այս անտրոշութիւնը որոշակիութեան կը վերածուի այն ժամանակ, երբ որ Լեւոն Տէր-Պետրոսեանն իր որոշումը կայացնի: «Նա որպէս առաջնորդ պարտաւոր է առաջադրուել: Լեւոն Տէր-Պետրոսեանի թեկնածուն ցանկացած կարող է լինել, բայց ՀԱԿ-ի թեկնածուն չի կարող լինել Մանուկեանը: Եթէ Լեւոն Տէր-Պետրոսեանը չառաջադրուի, պէտք է առաջնորդ փոխուի», - ընդգծեց Գիմիշեանը:

Միաժամանակ նա նշեց, որ ընտրական համակարգ Հայաստանում գոյութիւն չունի, ցանկացած թեկնածու քաջ գիտակցում է, որ պայքարելու է վարչական ռեսուրսների, բիրտ ուժի ու կեղծիքների դէմ:

**ԱԱԾ-Ն ԿԸ ՍԿՍԻ ՍՏՈՒԳԵԼ ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻԲԵՐԸ**

Հայաստանի նախկին արտգործնախարար, «Բարգաւաճ Հայաստան» խորհրդարանական խմբակցութեան պատգամաւոր Վարդան Օսկանեանը հերթական անգամ հրաժարուել է Ազգային անվտանգութեան ծառայութիւնում (ԱԱԾ) ցուցմունքներ տալ:

Այս անգամ ԱԱԾ-ի աշխատակիցներին հետաքրքրել է «Միվիլիթաս» հիմնադրամի Նոյեմբերի 2-ին տարածած յայտարարութեան մէջ տեղ գտած պնդումը, թէ Օսկանեանի եւ «Միվիլիթաս» հիմնադրամի նկատմամբ հետապնդումը սկսուել է դեռեւս 2009 թուականից:

Հիմնադրամն իր այս վարկածն ապացուցող մի քանի օրինակներ էր մատնանշել: Սակայն ԱԱԾ-ն, ինչպէս «Ազատութիւն» ռադիոկայանին տեղեկացրել է Օսկանեանի փաստաբան Տիգրան Աթանէսեանը, հետաքրքրուել է չտակապէս մէկով, ըստ որի 2009 թուականին Վարդան Օսկանեանն ընտրուել էր Հայաստանի առեւտրային բանկերից մէկի խորհրդի անդամ, սակայն բանկի մեծամասնական բաժնետէրերին անանկացման սպառնալիքով ստիպել են Օսկանեանի հանել խորհրդի անդամութիւնից: Օսկանեանի փաստաբանը պնդում է, որ այս հարցում եղել է երկրի բարձրագոյն ղեկավարութեան միջամտութիւնը:

«ԱԱԾ-ն փորձեց հարցաքննել, պարոն Օսկանեանը ցուցմունք չտուեց այդ կապակցութեամբ», - ասել է Աթանէսեանը:

Դուրս գալով ԱԱԾ-ից՝ նախկին արտգործնախարարը կրկին պնդեց, որ իրեն առաջադրուած մեղադրանքներն անհիմն են, ասել է՝



Հայաստանի նախկին արտգործնախարար Վարդան Օսկանեան

չի ընդունում դրանք:

«Ազատութիւն» ռադիոկայանի հարցին՝ եթէ «Բարգաւաճ Հայաստան»-ը որոշի պաշտպանել Սերժ Սարգսեանին եւ առաջիկայ նախագահական ընտրութիւններին սեփական թեկնածուով չմասնակցի, ինչի շատագուր ինքը՝ Օսկանեանն է, ի՞նչ քայլեր կը ձեռնարկի, արդեօք կը լքի՞ ԲՀԿ-ն, Օսկանեանը պատասխանել է. - «Սպասենք ԲՀԿ-ի որոշմանը: Ես կուսակցութեան անդամ եմ, կուսակցութիւնը կը կայացնի իր որոշումը, եւ որոշումը կայացնելուց յետոյ մենք միասնական ջանքերով կը շարունակենք մեր պայքարը, եւ ԲՀԿ-ն անկասկած իր մեծ ներդրումը կ'ունենայ այս ամէնի մէջ: Շատ ժամանակ չի մնացել, սպասէք, շատ շուտով դրա պատասխանը կը լինի»:

ԱԱԾ-ում Օսկանեանին նաեւ տեղեկացրել են, որ կը սկսեն ստուգել իր բանկային հաշուհամարները:

# ԼՈՒՐԵՐ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԳԱՂԹԻ ՀՈՍՔԸ ՄԵԾԱՑԵԼ Է»

Պաշտօնական տուեալների համաձայն՝ այս տարուայ առաջինինը ամիսներին Հայաստանից մեկնելու ռեզեն վերադարձել երկրի շուրջ 110 հազար քաղաքացիներ:

Այս տուեալը առկայ է Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) օրերս հրատարակած պաշտօնական տեղեկագրում:

Ընդ որում, ԱՎԾ-ի համաձայն, անցած տարուայ նոյն ժամանակահատվածի՝ Յունուար - Մեպտեմբեր ամիսների համեմատ մեկնածների քանակն աճել է. անցած տարուայ առաջինինը ամիսներին երկրից մեկնելու ռեզեն վերադարձել շուրջ 98 հազար Հայաստանի քաղաքացիներ:

Միգրացիոն հարցերով փորձագետ Վարդան Գեորգեանի համոզմամբ՝ այդ թուեքը ցոյց են տալիս, որ Հայաստանից միգրացիոն հոսքը մեծացել է, ինչը, ընդ որում, բնորոշ է վերջին տարիների համար:

Գեորգեանը, ի դէպ, դեկավարել է այն աշխատանքային խումբը, որը 2009 թուականին պատրաստել է Հայաստանին վերաբերող ՄԱԿ-ի Մարդկային զարգացման վերջին զեկոյցը՝ նուերուած հենց միգրացիոն հարցերին:

«Վերջին հինգ տարիներին ընդհանուր միտումը այնպիսին էր, որ նկատելի է վատթարացման միտում», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում նշեց փորձագետը:

Միգրացիոն նման դինամիկայի հիմնական պատճառներին վերաբերող հարցին Վարդան Գեորգեանը արձագանքեց. - «Ընդ-

հանրապէս, Հայաստանից միգրացիոն հոսքերի գլխաւոր պատճառները, ընդունուած է ասել, որ տնտեսական պատճառներն են, առաւել եւս՝ պաշտօնական մեկնաբանութիւնները աչպիսին են... Այսինքն, գլխաւորապէս աշխատանքային էմիգրանտներն են հեռանում, ովքեր աշխատանք չունեն կամ չունեն բաւարար վարձատրուող աշխատանք: Բայց ես անկեղծ հակուած եմ ասելու, որ ոչ միայն տնտեսական պատճառներն են, կան նաեւ քաղաքական պատճառներ, ասենք՝ ընտրութիւնների արդիւնքներից հիասթափութիւնները, երկրում ապագայ չտեսնելու, հեռանկար չտեսնելու խնդիրները»:

Գեորգեանը յաւելեց, որ վերջին շրջանում Հայաստանից սկսել են աւելի շատ մեկնել ոչ միայն աշխատանքային միգրանտները, ովքեր յաճախ տարուայ վերջին վերադառնում էին, այլ նաեւ այդ միգրանտների ընտանիքների անդամները, իսկ դա նշանակում է, որ նրանք գնում են կամ երկար ժամանակով, կամ ընդմիշտ:

«Շատերը, որ նախկին տարիներին մեկնել են որպէս ժամանակաւոր աշխատանքային միգրանտներ, մի քանի տարի գնացել են եկել են՝ հիմնականում տղամարդ բնակչութիւնը, բայց յետոյ հասկացել են, որ գնալ-գալը այլեւս անարդիւնաւէտ է, մնացել են, հաստատուել են, այսպէս ասենք՝ ընդունող երկրներում, հիմա էլ արդէն որոշում են ընտանիքները վերամիաւորել եւ տանում են ընտանիքները», - ասաց փորձագետը:

## ԻՆՉ ՆՊԱՏԱԿ ԷՐ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Ադրբեջանի արտաքին գործերի նախարար էլմար Մամեդեարովի հետ փարիզեան հանդիպման նպատակն էր՝ վերադարձնել Ադրբեջանին կառուցողական բանակցութիւնների դաշտ: Այդ մասին այսօր՝ նոյեմբերի 5-ին, ՀՀ Ազգային ժողովում բիւջետային քննարկումների ժամանակ յայտարարեց ՀՀ արտգործնախարար էդուարդ Նալբանդեանը: Նրա խօսքով՝ հանդիպումը նախաձեռնել են Մինսկի խմբի եռանախագահները, քանի որ Ադրբեջանը մինչ այդ (Կազանում, Սոչիում, Աստրախանում, Սանկտ Պետերբուրգում) կայացած գագաթնաժողովների ընթացքում մերժել է բոլոր այն առաջարկները, որ կատարուել էին եռանախագահների կողմից՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգաւորման ուղղութեամբ:

«Փաստորէն՝ Ադրբեջանը մերժում էր բանակցային գործընթացն առաջ շարժելուն ուղղուած առաջարկները, տապալում էր բանակցային գործընթացը: Վերջին խաչատուակ գործարքը Սաֆարովի ար-

տայանձման հետ կապուած՝ եւս մէկ հարուած էր բանակցային գործընթացին: Հայաստանը Սաֆարովի դէպքից մի քանի օր անց յայտարարեց, որ տրամադրուած է եւ վճարական է շարունակելու բանակցութիւնները: Եւ եթէ որեւէ կողմ ցանկութիւն ունի չշարունակել բանակցութիւնները՝ դա ադրբեջանական կողմն է: Դա էր պատճառը, որ եռանախագահները նախաձեռնեցին այդ հանդիպումը», - ասաց է. Նալբանդեանը:

Նրա խօսքով՝ վերջին 2 ամսում որոշ փոփոխութիւն կա միջազգային հանրութեան դիրքորոշումներում: «Չկայ մի երկիր, մի կառույց, որը խստորէն չքննադատեր ու չարտաչափեր իր վրդովմունքը այդ քայլի վերաբերեալ: Միայն մի բան չի փոխուել՝ դա Հայաստանի եւ եռանախագահների ընդհանուր ցանկութիւնն է՝ շարունակել բանակցային գործընթացը եւ պարտադրելու Ադրբեջանին խաղաղ կարգաւորում ԼՂՀ վերաբերեալ», - նշեց է. Նալբանդեանը:

### ՀԱՆ-Ի ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Շարունակուած էջ 1-էն

Նաեւ Գոնկրէսական ճուտի Չիւ, որ հետեւողական օրէն գորակից եղաւ Ամերիկահայ համայնքին:

«Քալիֆորնիոյ Նահանգային խորհրդարանին ներս Ամերիկահայ խաչ Աշճեան եւ Քրիսթին Օլարն երկուքն ալ հասան յաջողութեան: Նաեւ Փաստինայի նախկին քաղաքապետ Քրիս Հոլտըն

ընտրուեցաւ Նահանգային խորհրդարանի անդամ»

«Վերջապէս, Նահանգային խորհրդարանի 43-րդ հայաշատ ընտրաշրջանին ներս քուէարկողները վերընտրեցին Մայք Կաթոնին: Կաթոն իր պաշտօնավարութեան ընթացքին խորհրդարանին ներս ներկայացուց բազմաթիւ հայանպատ օրինագիծեր:», ըսուած է ՀԱՆ-ի յայտարարութեան մէջ:

## «ՍՈՒՐԲ ԿԻՐԱԿՈՍԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄՆ ԱՆՑԵԱԼԻ ՎԵՐՔԵՐԸ ՄԻԱՍԻՆ ԲՈՒԺԵԼՈՒ ՋԱՆՔ Է»



Նոյեմբեր 4-ին կատարուեցաւ Դիարբեքի Սուրբ Կիրակոս եկեղեցւոյ վերաբացումը

Թուրքիայի հարաւ-արեւելեան հատուածում գտնուող Դիարբեքի Սուրբ Կիրակոս եկեղեցու վերաբացման կապակցութեամբ յայտարարութիւն է արել Դիարբեքի քուրդ քաղաքապետ Օսման Բալզեմիրը:

Մերձաւոր Արեւելքի ամենամեծ հայկական եկեղեցու վերոնորգման ծախսերի 30 տոկոսն ստանձնած Դիարբեքի քաղաքապետ Օսման Բալզեմիրը յայտարարել է, թէ Սուրբ Կիրակոսի բացումը անցեալի վերքերը միասին բուժելու ջանք է, իսկ մեր աջակցութիւնը՝ 90 տարիների հատուցումը...:

Դիարբեքի Նոյեմբերի 4-ին տեղի ունեցաւ հայկական Սուրբ Կիրակոս եկեղեցու ամբողջական վանական համալիրի օծումն ու առաջին պատարագը: Պատարագին մասնակցել են Սուրբ քաղաքապետ Աբդուլլահ Դեմիրբաշը, Դիարբեքի փոխքաղաքապետ Հաֆիզ Իփեքը, դիարբեքի յայտնի հայ գրող, ում անունով Դիարբեքում կայ նաեւ փողոց, Մկրտիչ Մարկոսեանը, Հրանդ Դինքի կինը՝ Ռաբէլ Դինքը, բազմաթիւ արուեստագէտներ, լրագրողներ եւ աշխարհի տարբեր մասերից Դիարբեքի ժամանած հայեր:

## ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԸ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՃԻ ԿԻՉԱԿԵՏՈՒՄ

Իսրայէլի իշխանութիւնները սառեցրել են քրիստոնէութեան հիմնական սրբավայրերից՝ Սուրբ Յարութեան տաճարի տնօրինութիւնը ստանձնած երեք եկեղեցիներից մէկի՝ Յոյն Ուղղափառ եկեղեցու երուսաղէմի պատրիարքութեան բոլոր հաշուէհամարները:


Պատճառը՝ Յարութեան տաճարի ջրամատակարարման դիմաց տասնամեակների ընթացքում կուտակուած պարտքն է, որն ըստ երուսաղէմի ջրմուղը տնօրինող «ԽԱ Գիհոն» ընկերութեան, կազմում է շուրջ երկու միլիոն դոլար:

Տաճարը հաւասարութեան սկզբունքներով կառավարում են Հայ Առաքելական եկեղեցու երուսաղէմի պատրիարքարանը, Յոյն Ուղղափառ եւ Կաթոլիկ եկեղեցիները: Յունական եկեղեցու ներկայացուցիչներն արդէն իսկ հանդէս են եկել յայտարարութեամբ՝ նշե-

նշենք, որ 1400 աղօթատեղի ունեցող Դիարբեքի Սուրբ Կիրակոս եկեղեցին կառուցուել է 1376 թուականին, Հանչեփեթ թաղամասում, որը տեղի մահմեդականները անուանել են «գիւուրների թաղամաս» քանի որ մեծ թուով քրիստոնէաներ են ապրել մինչեւ Հայոց ցեղասպանութիւնը:

Մերձաւոր արեւելքի ամենամեծ եկեղեցու զանգակատունը 1913-ին աւերուել է կայծակի հարուածից, որից յետոյ տեղի հայերը նոր զանգակատուն են կառուցել, որի զանգը ձուլուել էր ոսկու եւ պղնձի խառնուրդից: Մակայն 1914-ին այս անգամ կայծակի հարուածած տեղին հարուածեցին թուրքերը՝ թնդանօթով աւերելով զանգակատունը միայն նրա համար, որ այն աւելի բարձր էր շրջակայքի մզկիթների մինարեթներից:

Սուրբ Կիրակոս եկեղեցին 1980-ից թողուել է բախտի քմահաճոյքին: Այնուհետ, Ստամբուլում ապրող դիարբեքից հայերը ստեղծել են «Սուրբ Կիրակոս հիմնադրամ»՝ վերանորոգելու եկեղեցին: 2,5 մլն դոլար արժողութեամբ վերանորոգման ծախսերի 70 տոկոսը իր վրայ է վերցրել հայկական հիմնադրամը, իսկ 30-ը՝ Դիարբեքի քաղաքապետարանը:



ով, որ դեռ Օսմանեան Կայսրութեան ժամանակաշրջանից Սուրբ Յարութեան տաճարը ազատուած է եղել բոլոր տեսակի հարկերից եւ կոմունալ վարձավճարներից, եւ որ իսրայէլական ընկերութեան պահանջն անօրինական է:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՆՇՈՒԵՑԱԲ Ա.Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ 125-ԱՄԵԱԿԸ

# ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ ՖՐԱՆՍԱՅԻ ՆԱԽԱԳԱՐ ՀՈԼԼԱՆՏԻ ԼԻԲԱՆԱՆ ԿԱՐԾ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ



Հանդիսությունից արտաքին խմբակցարձան

## Շարունակում է 1-ին

Թեան կուսակաճ խոհեմութիւնը եւ իմաստութիւնը՝ յանուն ժողովուրդի ծառայութեան: Վարչապետը հաստատեց, թէ անանդական կուսակցութիւնները ազգի հարատուութիւնն են եւ անոնց հզօրացումը կը բխի ազգի շահերէն:

Վարչապետին համաձայն, տարածաշրջանի աշխարհաքաղաքական իրավիճակը լեցուն է մարտահրաւէրներով, հետեւաբար, անհրաժեշտ է ջանքերը եւ ուժերը ուղղել երկրի անվտանգութեան պահպանման:

«Ձեր կուսակցութիւնը աշխարհով մէկ սփռուած իր կառուցներու միջոցաւ ներդրումներ կ'ուղղորդէ դէպի Հայաստան: Այդ՝ վկայութիւն է կուսակցութեան խոհեմութեան եւ իմաստութեան, որ կուսակուած է 125 տարիներու ընթացքին, հայրենիքի եւ հայ ժողովուրդի շահերը վեր դասելով կուսակցական շահերէն», հաստատեց Վարչապետ Սարգսեան:

Խօսելով նախագահական ընտրութիւններուն մասին, վարչապետը վերահաստատեց, որ ընտրութիւնները պիտի ըլլան թափանցիկ եւ արդար, պիտի ապահովեն մրցակցային հաւասար պայմաններ՝ բոլոր թեկնածուներուն համար: Իբրեւ Հայաստանի Հանրապետական կուսակցութեան փոխ նախագահ, վարչապետ Տիրգրան Սարգսեան վերահաստատեց, որ իրենք պատրաստ են համագործակցելու քաղաքական բոլոր այն ուժերուն հետ, որոնց խնդիրը միայն սեղնելը չէ, որոնք առկայ հարցերուն կը մօտենան սրտացալութեամբ: «Վստահ եմ, որ Հնչակեան կուսակցութիւնը ճիշդ այդպէս է: Մենք վստահ ենք, որ սոցիալ-

դեմոկրատական արժէքները պատշաճ ձեւով պէտք է ներկայացուած ըլլան Հայաստանի քաղաքական դաշտին վրայ եւ այդ առումով կուսակցութիւնը ունի լուրջ գործ», ըսաւ Հայաստանի վարչապետը:

ՄԴՀԿ Կեդրոնական Վարչութեան ատենապետ Ընկ. Սեդրակ Աճեմեան կուսակցութեան պատմականը ընելէ ետք, խօսեցաւ կուսակցութեան ձեռքբերումներուն եւ Հայաստանի քաղաքական կեանքին մէջ կուսակցութեան դիրքորոշումներուն մասին: Ան իր խօսքին մէջ դիտել տուաւ, որ Հայաստանի Հանրապետութիւնը պիտի շահի, երբ վարչապետին եւ իշխանութեան աշխատանքները կը գնահատուին ու կը քննադատուին:

«Հայաստանի մէջ բարեփոխումներու այս ընթացքը որոշակի լաւատեսութեան յուսեր կը ներշնչէ», - հաստատեց ՄԴՀԿ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետը:

Շնորհաւորական խօսքերով հանդէս եկան «Ժառանգութիւն» կուսակցութեան փոխ նախագահ Արմէն Մարտիրոսեանը, ՌԱԿ ատենապետ Յակոբ Աւետիքեանը, Սուրբոյ Հիւսիսային Շրջանի վարիչ Մարմնի անդամ Ընկ. Յարութիւն Պալապանեանը, Լիբանանի շրջանի վարիչ մարմնի ատենապետ Ընկ. Ալեքսան Բեռնարեանը եւ պատմական գիտութիւններու դոկտոր, փրոֆեսոր Ստեփան Ստեփանեանը: Միջոցառումը վարեցին Ընկ. Մանուկ Ստեփանեանը եւ «Արարատ» օրաթերթի տնօրէն Ընկ.Տի Անի Եփրեմեանը: Աւարտին ցուցադրուեցաւ Հնչակեան կուսակցութեան մասին վաւերագրական ժապաւէն մը եւ հանդիսաւոր նիստը փակուեցաւ Ուիտի Հրաւերով:

Երկուշաբթի, Նոյեմբեր 5ին, 2012, Ֆրանսայի Հանրապետութեան նախագահ Ֆրանսուա Հոլլանտ, կարճատեւ այցելութիւն մը տուաւ Լիբանան: Ան Պապատայի պալատին մէջ նախաճաշի հիւրն եղաւ նախագահ Միշէլ Սլէյմանի: Այցի աւարտին տեղի ունեցաւ միացեալ մամուլի ասուլիս մը, որու ընթացքին Ֆրանսայի նախագահը խոստացաւ «պաշտպանել» Լիբանանը, Սուրբոյ ճգնաժամին պատճառով տեղի ունեցած ապակայունացման սպառնալիքներուն դէմ:

Արդարեւ, Ֆրանսուա Հոլլանտի Պէյրութ կատարած այս կարճատեւ այցելութիւնը վերջին պահուն առնուած որոշում մըն էր, որպէս զի ան յայտնէր Ֆրանսայի զօրակցութիւնը, Լիբանանի, յատկապէս Հոկտեմբերի 19ին գաղտնի սպասարկութեան պետ Հասանի դէմ կատարուած անհրաժեշտ արարքէն ետք:

## ԵԳԻՊՏՈՍԻ ՂՊՏԻՆԵՐՈՒ ՆՈՐ ՊԱՊԸ

83 միլիոն բնակչութիւն ունեցող Եգիպտոսի հարիւրէն 10 ղպտի ուղղափառ քրիստոնեաներէ կը բաղկանայ: Անցնող շաբաթավերջին տեղի ունեցած ընդհանուր ժողովի ընթացքին ընտրուեցաւ նոր պապ մը եւ վերանուանուեցաւ Թաուադոս Երկրորդ: Ան կը փոխարինէ անցեալ Մարտ ամսուան ընթացքին վախճանած Շնուտա Երրորդ Պապին:

Այս առթիւ Հռոմի Պապը՝ Պենէտիկտոս 16րդ, շնորհաւորական հեռագիր մը յղեց ղպտի եկեղեցւոյ նորընտիր Պապին, մաղթելով որ իր օրով առաւել եւս ամրապնդուի խաղաղութիւնն ու ներդաշնակութիւնը Եգիպտոսի մէջ, ինչպէս նաեւ կաթողիկէ եւ ղպտի եկեղեցիներու միջեւ:

## ՊԱՅԹԻՒՆՆԵՐ ՊԱՐԻՅՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՄԷՋ

Քսան ամիսներէ ի վեր Պահրէյնի մէջ կը շարունակուին ազատագրական պայքարի ժողովրդային ցոյցերն ու կռիւները Պահրէյնի մէջ: Մայրաքաղաք Մանամային ստացուած տեղեկութեանց համաձայն Արեւմուտքի եւ Մէլուտական Արաբիոյ նեցուկը վայելող այժմու բռնակալը՝ բիրտ միջոցներու դիմած է կասեցնելու համար ժողովրդավարական կարգերու հաստատումը պահանջող զանգուածային ցոյցերը: Միայն անցնող երկու օրերուն Մանամայի մէջ պայթած հինգ ուսմբերու հետեւանքով մահացած են երկու արտասահմանցի գործաւորներ:

## ՍՈՒՐԻՈՅ ԵՕԹԸ ՊԱՏԱՆԴՆԵՐԷՆ ՄԻՆ ԱԶԱՏ ԱՐՉԱԿՈՒԾ

Պէյրութի «Ռատիօ Սեւան» կայանէն ստացուած լուրերէն կ'իմանանք թէ անցնող շաբթուան ընթացքին Դամասկոսէն Հալէպ ուղեւորուող եօթ հայ երիտասարդներ պատանդ վերցուած էին ընդդիմադիրներու կողմէ: Վերջին լուրերու համաձայն անոնցմէ մին ազատ արձակուած է:

Նոյն կայանին համաձայն Հալէպի Վիլլաներ թաղամասին մէջ, անծանօթ փամփուշտի զոհ գացած է 1968 թուականին ծնած վարդան Խաչատուրեան:

Միւս կողմէ Տէր Զօրի մէջ քարիւղի կեդրոն մը ինկած է ընդդիմադիրներու ձեռքը: Իսկ Դամասկոսի Մէզգէի օդակայանին մօտերը տեղի ունեցած է ինքնաշարժի ուժեղ պայթիւն մը:

## ՖՐԱՆՍՈՒԱ ՀՈԼԼԱՆՏ ՍԵՈՒՏԱԿԱՆ ԱՐԱԲԻՈՅ ՄԷՋ

Ֆրանսայի Հանրապետութեան նախագահ Ֆրանսուա Հոլլանտ, Պէյրութէն ետք, ձեռտա մեկնելով իր անդրանիկ այցելութիւնը տուաւ Մէլուտական Արաբիոյ: Ան Ապտալլա թագաւորին հետ խորհրդակցութիւն մը ունեցաւ, որուն ներկայ գտնուեցաւ նաեւ Լիբանանի նախկին վարչապետ Սաատ Հարիրի: Երկու ղեկավարները միասնաբար քննարկած են Միջին Արեւելքը յուզող էական հարցեր, մասնաւորաբար Իրանի, Սուրիոյ եւ Լիբանանի վերաբերեալ:

Բացի քաղաքականէն՝ երկու ղեկավարները քննարկած են նաեւ ուժանիւթի հարցերը:

Կարգ մը դէտերու կարծիքով՝ նախագահ Հոլլանտի այցելութիւնը դէպի Մէլուտական Արաբիա, կը նպատակադրէր նաեւ ամրապնդել Փարիզ-Ռիատ յարաբերութիւնները, որոնք շատ գաղջ վիճակ մը ունէին նախկին նախագահ Նիքոլա Սարքոզիի օրով:

# ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՀՆՉԱԿԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ

Ա.Դ. Հնչակեան Կուսակցութեան հիմնադրութեան 125 ամեակին առթիւ, պաշտօնական հոգեհանգիստ տեղի պիտի ունենայ Կուսակցութեան բոլոր նահատակներու հոգիներուն համար հովանաւորութեամբ Արեւմտեան Թեմի Առաջնորդ՝ **Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի**

Պիտի պատարագէ եւ աւուր պատշաճի ֆարոգէ ու հոգեհանգստեան արարողութեան նախագահէ **Արցախի առաջնորդ՝**

**Գերշ. Տ. Պարգեւ Արք. Մարտիրոսեան**

Ա. Պատարագի ընթացքին պիտի կարդացուի Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական սրբատառ կոնդակը Ա.Դ.Հ.Կ.ի 125 ամեակին առթիւ

Տեղի կ'ունենայ Կիրակի, 18 Նոյեմբեր, 2012, Ս. Ղեւոնդ Մայր տաճարին մէջ

Հասցէն՝ 3325 N. Glenoaks Blvd., Burbank, CA 91504

# ԼԻԲԱՆԱՆԱՅԱՅ ԿԱՆԳՈՒՆ ԼՐԱԳԻՐՆԵՐՈՒ «ԵՐԻՏԱՍԱՐԴ» ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ-Ը «ԱՐԱՐԱՏ» ԲՈԼՈՐԵՑ ԻՐ 75-ԱՄԵԱԿԸ

Ասիկէ շուրջ 8 տասնամեակ առաջ, երբ խումբ մը հայտնաբերեց անդամներ, պատասխանատուներ կամ համակիրներ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան, կը մտածէին հայ առաջին քաղաքական կազմակերպութեան տեսակէտները պարզող եւ ժողովուրդին ու հայրենիքին շահերը պաշտպանող թերթ մը կամ պարբերական մը հիմնելու մասին, երբեք իրենց միտքէն պիտի չանցնէին, որ 20-րդ դարու վերջաւորութեան աշխարհը «գրաւուած» պիտի ըլլայ համակարգիչի, համացանցի, Կուկլըյի, ձիմէյլի եւ անոնց յարակից միջոցներուն կողմէ, ինչպէս նաեւ «տիրապետուած» պիտի ըլլայ համաշխարհայնացումի եւ գերհզօր ուժերու խիստ զօրաւոր ազդեցութեան կողմէ: Այդ օրերուն այսօրուան այս բառերն ու հոմանիշները չկային եւ կարելի չէր մտածել անոնց մասին: Բայց վերոնշեալ այդ նուիրեալ հայտնիները ունէին վեհ նպատակ մը, որն էր պաշտօնաթերթի մը (այդ ժամանակ ռատիոն եւ հեռատեսիլն ալ գոյութիւն չունէին մեր մօտ) ընդմէջէն տարածել յօդուածներ, պարզել տեսակէտներ ու կարծիքներ, ի նպաստ հայ ժողովուրդին, անոր մաս կազմող խաւերուն, հայրենիքին ու Հայաստանեայց Առաքելական եկեղեցիին, անշուշտ առանց մոռնալու Լիբանանն ու արաբական աշխարհը, որուն արեւելեան մասի երկիրներուն մէջ՝ գլխաւորաբար Լիբանան, Սուրիա, Յորդանան, Պաղեստին, ապաստանած ու օթեւան գտած էին թրքական եւ իսրայէլական փախուստ տուած եւ գաղթականութեան շատ ծանր բեռնէն ձերբազատուած հայութեան կարեւոր մէկ մասին գաւակները: Լիբանանին ու արաբական աշխարհի այս մասին հետ սերտ կապեր հաստատած էին հայերը եւ անոնց ղեկավարութիւնները, միշտ փոխադարձ յարգանքի վրայ հիմնուած, հետապնդելով հայ եւ արաբ ժողովուրդներուն հասարակաց շահերը:

Ահա այսպիսի պայմաններու մէջ է, որ խումբ մը հայտնաբերեց կը նախաձեռնէին համարձակ քայլի մը, 7 Նոյեմբեր 1937-ին լոյս ընծայելով «Արարատ» օրաթերթի անդրանիկ համարը, իբրեւ պաշտօնաթերթ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան: Իր ծննդոցն ասդին, Համաշխարհային Բ. պատերազմի օրերուն, ապա լիբանանեան թէ շրջանային տագնապալի եւ պատերազմական ժամանակներուն ակամայ ընդմիջումներուն ի հեճուկս, «Արարատ» կը գոյատևէ մինչեւ այսօր եւ արդէն բոլորած է իր 75 ամեակը:

Ուրեմն, լման երեք-քառորդ դար, մեր թերթը, իբրեւ կուսակցական օրկան թէ քաղաքական-հասարակական թերթ, լոյս տեսած է ամէն օր, երբ կարելի եղած է, հրատարակելով քաղաքական, ընկերային, տնտեսական, մշակութային, մարզական թէ այլ բնոյթի յօդուածներ, որոնք պարզ լուրի ձեւով չէին տրուեր, այլ կը շօշափէին ժողովուրդը, հաւաքականութիւնը, երկիրը, հայրենիքը, եկեղեցին ու կուսակցութիւնը յուզող եւ հետաքրքրող տեսակէտներ ու կարծիքներ: Կը տրուէին մեկնաբանութիւններ հայկական, լիբանանեան ու միջազգային հարցերու շուրջ:

«Արարատ»-ին համար չափազանց կարեւոր եղած են նաեւ Հայաստանի եւ Ս. էջմիածինի վերաբերող խնդիրները, որոնք առկայ էին 75

տարի առաջ եւ կը շարունակուէին յաջորդող տարիներուն:

«Արարատ» եղած է Չատագովը եւ պաշտպանը Հայոց Հայրենիքի եւ Հայաստանեայց Առաքելական Ս. եկեղեցիին, երբ ատենօք վտանգ կը սպառնար անոնց, ըլլա՛յ այդ ժամանակ Արեւմուտքէն ու անոր դաշնակից թուրքիայէն, եւ ըլլայ այս օրերուն նենգ ազդերէն ու անոր պաշտպան եւ դաշնակից թուրքիայէն:

Ըլլալով իր ներկայացուցած կուսակցութեան բանբերը, «Արարատ» նուիրումով, անկեղծօրէն, հաւատարմօրէն եւ անսակարկօրէն պաշտպանեց հայ ժողովուրդին ու անոր հայրենիքին շահերը եւ դիրքորոշումները, մեծամասնութեամբ:

Եւ այս բոլորը՝ հակառակ իր դէմ եղած դաւերուն եւ հալածանքներուն, Լիբանանի մէջ թէ անկէ դուրս: Նոյնը եղաւ եկեղեցիի պարա-

զային, երբ անցեալ դարու կէսերուն պատահեցաւ տարաբախտ տագնապը Ս. էջմիածինի եւ Անթիլիասի կաթողիկոսութեան միջեւ, որ երկար տարիներ շարունակուեցաւ յաճախ մեր ժողովուրդին գաւակները հեռու պահելով իրարմէ: Բարեբախտաբար, այսօր այդ տագնապը եթէ ոչ ամբողջականօրէն, ապա զգալիօրէն մեղմացած է եւ անցեալի դէպքերը, կը յուսանք, անցած են պատմութեան էջերուն:

Կուսակցական գետնի վրայ, «Արարատ» միշտ պարզեց ՄԴՀԿ-ի սկզբունքներն ու գաղափարները, յաճախակիօրէն տալով կուսակցութեան երթին վերաբերող դրուագներ, դէպքեր ու իրադարձութիւններ, նշելով պատմական կարեւոր հանգրուաններ եւ հնչակեան ռահ-վիրաներու եւ ղեկավար դէմքերու մասին ուշագրաւ տեղեկութիւններ:

Անշուշտ միշտ ալ հեշտ չեղաւ «Արարատ»-ի ուղին: Ունեցաւ նեղ ու դժուարին օրեր, երբեմն վտանգ սպառնալով իր երթին ու գոյութեան: Դժուարութիւնները եղան

տեսակաւոր, որոնց փարատման համար միշտ աշխատեցան թերթին եւ կուսակցութեան պատասխանատուները:

Այժմ, ոչ հեռու թուականէ մը ասդին, դրական ու որակական բարեփոխում արձանագրուած է մեր թերթին մէջ: «Արարատ» լոյս կը տեսնէ անխափան, հրատարակող նիւթերը բազմազան են ու աւելի ընդունելի՝ ընթերցողներուն կողմէ: Մեր թերթը, հակառակ իր այսպէս ըսած «ալեւոր» տարիքին, կ'երիտասարդանայ եւ կը հրապուրէ երիտասարդ սերունդը, անշուշտ միշտ մնալով աւելի մեծ սերունդի ուշագրութեան սեւեռակէտին մէջ:

Լիբանանահայ կանգուն լրագիրներու «երիտասարդ» պաշտօնաթերթ՝ «Արարատ»-ը 75 տարիքը բոլորած է այսօր:

Այս տարիքը «երիտասարդ» է թէ «ծեր», անոր ընտրողները ընթերցողները կու տան: Մենք պէտք է մեր հայեացքները ուղղենք դէպի «Արարատ»-ի հարիւրամեակ: Վ.Ա.

### ՊԵՅՐՈՒԹԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԷՆ ՇՐՋԱՆԱԲԱՐՏ ՄԵԾ ԵՂԵՈՆԻՆ ՆԱՀԱՏԱԿՈՒԱԾ ՀԱՅ ԲԺԻՇԿՆԵՐ

#### ՀՐԱՋ ՔԵՍԵՆԵՆԱՆ

26 Յունիս 1923-ին, մեծ թիւով բժիշկներ հաւաքուեցան Պէյրուսի Ամերիկեան Համալսարանի (AUB, մինչեւ 1920 թ. կը կոչուէր Սուրիական Բողոքական Գոլէճ) «Ուեսթ Հոլ» սրահին առջեւ, հանդիսատես ըլլալու յուշատախտակի մը քողագերծումին, որ պատրաստուած էր ի յիշատակ Համաշխարհային Ա. Պատերազմին զոհուած, թրջական բանակին մէջ ծառայող համալսարանի Բժշկական Կաճառէն շրջանաւարտ բժիշկներուն: Համալսարանի յատենի նախագահ էտուըրտ Նիքոլէյ եւ Բժշկական Կաճառի նախագահ Հերի Տորմըն (Համալսարանի ներկայ նախագահ Դոկտ. Փիթըր Տորմընի մեծ հայրը) կարողացին նահատակ բժիշկներուն անունները, որոնք գրուած էին ոսկետառերով:

Այս փորագրուած յուշատախտակը, երեք տարի ետք՝ 9 Փետրուար 1926-ին, փոխարինուեցաւ պրոնզէ յուշատախտակով, որ մօտաւորապէս յիսուն տարի մնաց «Ուեսթ Հոլ» մէջ: 1976ին, Լիբանանի քաղաքացիական պատերազմի ընթացքին, գողութենէ փրկելու համար, յուշատախտակը պահուեցաւ «Գոլէճ Հոլ» մէջ: Դժբախտաբար, 1991-ին այս սրահը պայթուածի ենթարկուեցաւ ու յուշատախտակը անհետացաւ: Փորձեցի համալսարանի Physical Plant-ին հետ գտնել կորսուած յուշատախտակը, բայց դժբախտաբար ջանքերը ապարդիւն ելան: Այս պատճառով, համալսարանը արտօնեց, որ պրոնզէ նոր յուշատախտակ մը շինուի, որուն քողագերծումը տեղի ունեցաւ Հինգշաբթի, 1 Նոյեմբեր 2012-ին, «Ուեսթ Հոլ» մէջ:

Այս ամփոփ յօդուածը կը գրեմ այն յոյսով, որ կրնամ գտնել ազգականները այս նահատակ բժիշկներուն, որոնք Պէյրուսի Ամերիկեան Համալսարանի նշուած երեսուներկու բժիշկներուն տասնեօթը կը ներկայացնեն:

Երբ թուրքիա պատերազմ հռչակեց, անմիջապէս զօրաշարժի ենթարկուեցան Պէյրուսի գոյգ համալսարաններուն ուսանողները, որոնց մէջ կարեւոր թիւ կը ներկայացնեն հայ ուսանողները, մասնաւոր՝ բժշկական ճիւղինը:

Իրենց հաստատումէն մինչեւ 1918, մօտաւորապէս 232 բժիշկներ աւարտած են Պէյրուսի Ամերիկեան եւ Սեն Ժոզֆ Համալսարանները, որոնց 134-ը AUB-էն: Ըստ Պէյրուսի Ամերիկեան Համալսարանի Հայ Ուսանողական Միութեան (AUB) շրջանաւարտ բժիշկներու յիշատակը յաւերժացնող վերականգնուած յուշատախտակին:

Պէյրուսի Ամերիկեան Համալսարանի (AUB) «West Hall» շէնքին մէջ, բացուի կատարուեցաւ Օսմանեան բանակին մէջ ծառայած համալսարանի շրջանաւարտ բժիշկներու յիշատակը յաւերժացնող վերականգնուած յուշատախտակին:

Բացման արարողութիւնը կազմակերպուած էր Լիբանանահայ Աւանդներու Ակումբը, ներկայութեամբ՝ համալսարանի նախագահ Փիթըր Տորմընի: Վերջինս իր խօսքին մէջ նշեց, որ յուշատախտակը կը ներկայացնէ համալսարանի գոյատեւելու ոգին, ինչպէս նաեւ ապացոյց է կրթական այդ կեդրոնին մէջ տարբեր ֆաղափակքութիւններու համագոյակցութեան: Տորմըն նաեւ քարձր գնահատեց պատմական գիտութիւններու ուսանող Հայ Գիտնականներ, որոնք ներկայ ամիսներու ջանքերով, յայտնաբերուեցաւ 1923-ին տեղադրուած առաջին յուշատախտակին պատմութիւնը եւ պատրաստուեցաւ նոր յուշատախտակը:

Հանդիսութեան ընթացքին, խօսք արտասանեց նաեւ հայկական ակումբի ատենապետ Վահէ Սէֆէրեանը, որմէ ետք տեղի ունեցաւ գեղարուեստական յայտագիր:

րանի Հայ Ուսանողական Միութեան 25-ամեակի առիթով հրատարակուած գրքոյկին, Համաշխարհային Ա. Պատերազմին, շրջանաւարտ 28 հայ բժիշկներ եւ դեղագործներ սպաննուած են թուրքերու ձեռամբ, Մեծ Եղեռնի ընթացքին: Այս քսանութիւն տասնվեցը միայն յիշուած են յուշատախտակին վրայ: Մնացեալ տասներկուքը հաւանաբար չեն յիշուած, որովհետեւ ծառայած չեն թուրք բանակին:

- Այս 12 բժիշկներն ու դեղագործներն են.
- ՍԱՐԳԻՍ Գ. ԱԶՈՅԵԱՆ (շրջ. 1887)
- ՅՈՎՀԱՆՆԷՍ Գ. ԳԱՍԱՊԵԱՆ (շրջ. 1903)
- ԳԷՈՐԳ Ս. ԳՐԱՃԵԱՆ (շրջ. 1906)
- ՎԱՀԱՆ Յ. ՂԱԶԱՐԵԱՆ (շրջ. 1907)
- ԿԱՐԱՊԵՏ Գ. ՄԵԼԻՔԵԱՆ (շրջ. 1907)
- ԱՐՄԵՆԱԿ ՍԵՐԱՅՏԱՐԵԱՆ (շրջ. 1907)
- ՊԵՏՐՈՍ Դ. ՊԵՆԷԹՐՈՐՈՍԵԱՆ (շրջ. 1910)
- ՊԱՂՏԱՍԱՐ ՊԱՐՍԱՄԵԱՆ (դեղ., շրջ. 1889)
- ԽՈՍՐՈՎ ՔԷՇԻՇԵԱՆ (դեղ., շրջ. 1902)
- ՄԿՐՏԻՉ Կ. ՊԱԼՈՅԵԱՆ (դեղ., շրջ. 1902)
- ԱՐՄԱՅԻՍ Ա. ՉԻՔԻՃԵԱՆ (դեղ., շրջ. 1902)
- ՅԱԿՈՒ ՍԱՐԻԿԵԱՆ (դեղ., շրջ. 1902)
- ՕՎՍԷԱ ԳԷՈՐԳ ՀԵՔԻՄԵԱՆ - Ծնած է Քեսապ, 1880-ին: Նախնական կրթութիւն ստացած է ծննդավայրի հայկական Աւետարանական վարժարանին մէջ: Ապա, երեք տարի յաճախած է Այնթապի Ամերիկեան Գոլէճը (1896-1898): Ետքը մտած է Սուրիական Բողոքական



Գոլէճ (յետագային՝ Պէյրուսի Ամերիկեան Համալսարան - AUB), ուր հետեւած է բժշկութեան եւ ստացած է M.D. վկայականը: Աւարտելէ ետք, որպէս բժիշկ գործած է Քեսապի մէջ: Համաշխարհային Ա. Պատերազմին զօրակոչի ենթարկուելով, ուղարկուած է ռազմաճակատ: Թուրքերուն կողմէ կը սպաննուի 1915-ի Մայիսին: Ամուսնացած էր Օրդ. Կ. Ինճէճիկեանի հետ:

ՄԻՆԱՍ ԵԱՐՄԱՅԵԱՆ - Ծնած է Թուրքիա: Յաճախած է Պէյրուսի Ամերիկեան Համալսարանը, ուրկէ շրջանաւարտ է 1904-ին, բժշկութեան վկայականով: Համաշխարհային Ա. Պատերազմին, ընդառաջելով թրջական զօրակոչին, ծառայած է Ազիզիէի հիւանդանոցին մէջ, Երզնկա: Յունիս 1915-ին, անգլոթորէն սպաննուած է հիւանդանոցի բակին մէջ:

ՅԱԿՈՒ ՍԵՐՈՎԲԷ ԷՄԻՆԵԱՆ - Ծնած է Ռոտոս, 1878-ին: 1899-ին, Պսակաւոր Արուեստից վկայա-

կանը կը ստանայ Անաթոլիա Գոլէճէն: 1905-ին, բժշկութեան վկայականը կը ստանայ Սուրիական Բողոքական Գոլէճէն (յետագային՝ Պէյրուսի Ամերիկեան Համալսարան): Աւարտելէ ետք, ծառայած է Մերգիֆոնի մէջ որպէս բժիշկ: Դժբախտաբար, սպաննուած է Համաշխարհային Ա. Պատերազմին:

ԼԵՒՈՆ ԳԱՐԵԳԻՆ ՍԻԻՆԻ - Ծնած է Սվազ, Աւետարանական ընտանիքի մը յարկին տակ: Բժշկութեան վկայականը ստացած է 1905-ին: Իբր վիրաբոյժ աշխատած է Հայկական Ազգային Հիւանդանոցին եւ կառավարական հիւանդանոցին մէջ: Համաշխարհային Ա. Պատերազմի ընթացքին մահացած է թրջախտով:

ՈՍԿԱՆ Գ. ԹՕՓԱԼԵԱՆ - Ծնած է Մարաշ, 1878-ին, Հայ Առաքելական ընտանիքի մը յարկին տակ: Պսակաւոր Արուեստից վկայականը ստացած է Կեդրոնական Թուրքիոյ Գոլէճէն (նաեւ կոչուած՝ Այնթապ Գոլէճ), ու իր բժշկական տիտղոսը ստացած է Պէյրուսի Ամերիկեան Համալսարանէն 1905-ին: Որպէս վիրաբոյժ, հաստատուած է Տիգրանակերտ, եւ Համաշխարհային Ա. Պատերազմին ուղարկուած է Երզնկայի Ազիզիէ Հիւանդանոցը: Յունիս 1915-ին սպաննուած է Երզնկայի մօտերը:

ԿԻԻԼՊԵՆԿ ԳԷՈՐԳ ԿԻԻԼՊԵՆԿԵԱՆ - Ծնած է Թալաս, 1888ին, Հայ Առաքելական ընտանիքի մը երդիքին տակ: 1903-ին, Պսակաւոր Արուեստից վկայականը ստացած է Անաթոլիա Գոլէճէն, իսկ բժշկութեան վկայականը՝ Պէյրուսի Ամերիկեան Համալսարանէն, 1907-ին: 1907-1913 ծառայած է Թալասի մէջ, որպէս բժիշկ: Համաշխարհային Ա. Պատերազմին սպաննուած է ռուսական ճակատին վրայ:

ՍԱՐԳԻՍ Գ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ - Ծնած է Պանտէրմա, 1884-ին, Հայ Առաքելական ընտանիքի մը յարկին տակ: 1906-ին ստացած է բժշկութեան տիտղոսը: Համաշխարհային Ա. Պատերազմին սպաննուած է Տէր Զօրի ճամբուն վրայ:

ԼՈՒԹՅԻ ՅԱՐՈՒԹԻՆ ՀԱԼԷՊԵԱՆ - Ծնած է Այնթապ, 1882-ին, Աւետարանական ընտանիքի մը երդիքին տակ: 1902-ին, Այնթապի Գոլէճէն ստացած է Պսակաւոր Արուեստից վկայականը, եւ բժշկութեան վկայականը՝ 1907-ին, Պէյրուսի Ամերիկեան Համալսարանէն: 1907-1913 ծառայած է Այնթապի եւ Մալաթիոյ մէջ, որպէս

Շաբ.ը էջ 17

**Bedros S. Maronian**  
818/500-9585

**Siamanto B. Maronian**  
818/269-0909

**SERVING THE COMMUNITY SINCE 1975**  
More locations and more ways to service your insurance and financial needs

Ժողովի սկիզբը Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր օրհնութիւնը բաշխեց եւ գնահատեց անդամները՝ արդիւնաւոր աշխատանք մաղթելով ժողովականներուն: Նորին Սրբութիւնը նաեւ ողջունեց Երուսաղէմի Հայոց Պատրիարքական Տեղապահ՝ Գերշ. Տ. Արիս Արքեպիսկոպոս Շիրվանեանի եւ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան Գերշ. Տ. Սահակ Եպիսկոպոս Մաշալեանի մասնակցութիւնը ժողովին:

Մինչ օրակարգին անցնիլը, Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի անդամները աղօթք բարձրացուցին Երուսաղէմի Հայոց Պատրիարք՝ Երջանկայիշատակ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանի եւ Աւստրալիայի եւ Նոր Զելանտայի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Աղայն Արքեպիսկոպոս Պալիօզեանի հոգիներու հանգստութեան համար:

Ժողովի նիստերուն ատենապետեցին Գերշ. Տ. Արիս Արքեպիսկոպոս Շիրվանեան եւ Գերշ. Տ. Սահակ Եպիսկոպոս Մաշալեան:

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդին Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան վերաբերեալ տեղեկութիւններ փոխանցեց Պատրիարքական Տեղապահ Արիս Սրբազան՝ շնորհակալութիւն յայտնելով

Վեհափառ Հայրապետին՝ Երուսաղէմի Սուրբ Աթոռին եւ եկեղեցական դասին ցուցաբերած զօրակցութեան համար: Ժողովականները իրենց գնահատանքը յայտնեցին Պատրիարքական Տեղապահին եւ Երուսաղէմի գինուորեալ միաբանութեան իրենց նուիրեալ ծառայութեան համար՝ մաղթելով, որ Աստուած զօրավիգ ըլլայ Երուսաղէմի Սուրբ Աթոռին եւ օգնական Տեղապահ Սրբազանին՝ կազմակերպելու պատրիարքական յառաջիկայ ընտրութիւնները:

Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան գործունէութեան վերաբերեալ զեկուցեց Գերշ. Տ. Սահակ Եպիսկոպոս Մաշալեան:

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը ի գիտութիւն ընդունեց Մայր Աթոռի Դիւանապետ Գերշ. Տ. Արշակ Եպիսկոպոս Խաչատրեանի զեկուցը յառաջիկայ տարի գումարուելիք Հայ Եկեղեցոյ Ընդհանուր Եպիսկոպոսաց Ժողովի առնչութեամբ, որու ընթացքին մասնաւորապէս քննութեան պիտի առնուին Հայ Եկեղեցոյ Ծիսական Յանձնաժողովի եւ Սրբադասման Յանձնաժողովի կատարած աշխատանքները:

Հայոց Ցեղապանութեան 100րդ տարելիցի առիթով Մայր Աթոռի միջոցառումներու մասին զեկուց ներկայացուց յանձնաժողովի Նախագահ՝ Գերշ. Տ. Միքայէլ Եպիսկոպոս Աջապահեան: Քննարկելով ներկայացուած նախագիծը՝ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը իր գնահատանքը յայտնեց յանձնա-խումբին կատարած աշխատանքի համար:

**ՄԱՍԻՍ** **ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ**

---

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
 Enclosed a check for (one year)  
 \* \$50,00 for USA  
 \* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.  
 \* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
 Address: -----  
 City: ----- State:----- Zip Code:-----  
 Country: -----  
 Tel :----- Fax :-----

### ՎԱՂԱՍԵՌԻԿ ՎԱՐԴԳԷՍ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՈՒԹՍՈՒՆԱՍԵԱԿԻՆ ԱՌԹԻ

#### ՀԱՅԿՆԱԳԳԱՇԵԱՆ

Վարդգէս Պետրոսեան իր գրական տաղանդին եւ վարչական կարողութեան առ ի գնահատանք, տակաւին շատ երիտասարդ տարիքին, արդէն տիրացած էր խորհրդային Հայաստանի Գրողներու Միութեան նախագահի պաշտօնին: Յիշարժան պարագայ էր որ Աւետիք Իսահակեանէն յետոյ, նախագահ յորջորջումը ունէ մէկուս չէր տրուած, այլ կը կոչուէին Գրողներու Միութեան քարտուղար՝ ունեւնայով Ա.Բ. եւ Բ. օգնական քարտուղարներ: Մեծ եւ պատասխանատու գործ էր ղեկավարել շուրջ 350 անդամ ունեցող այդ Միութիւնը՝ հասնելու համար գրողներու գործերուն հրատարակութեան, պատուագիներու վճարման եւ անոնց բազմաթիւ պահանջներուն: Ինչպէս բնականաբար այնքան հարց, ինքնաշարժ, տարեկան վճարուած արձակուրդ՝ Ծաղկաձորի մէջ, կամ այլուր եւայլն:

Անհուն գոհունակութեամբ կը չի շեմ սերտ գործակցութիւնը որ կար Սփիւռքի եւ Հայրենիքի գրողներուն միջեւ: Այս իրականութեան մէջ գեղեցիկ օրինակը եղաւ «Շիրակ» ամսագրին 25 ամեակին տօնակատարութիւնը Պէյրութի մէջ, որուն նախագահելու հրաւիրուած էր Վարդգէս Պետրոսեան: Փոխադարձաբար, սփիւռքահայ գրողները կը հրաւիրուէին Հայաստանի մէջ տեղի ունեցող տօնակատարութիւններուն, ինչպէս Վ. Պետրոսեանի յիմնամեակի հանդիսութիւնը, որուն բացումը Սերո խանգատեան կատարելէ յետոյ, խօսք տրուեցաւ ինծի, յանուն «Շիրակ» ի խմբագրութեան:

Ստորեւ իմ խօսքը.

«Սովետական Հայաստանի պետութեան յարգարժան ներկայացուցիչներ,

Գրողներ, գրականագէտներ, գիտնականներ, արուեստագէտներ եւ յարգելի ներկաներ,

Հաւաքուած ենք տօնախմբելու համար 50-ամեակը մարդու մը, որուն համբաւը հայրենիքէն դուրս ելլելով սկսած է լսելի դառնալ սփիւռքի բոլոր գաղութներուն մէջ:

Վարդգէս Պետրոսեանը ժամանակ մը առաջ անուն մըն էր ինծի համար, ինչպէս սիրուած անունները շարք մը հայրենի գրողներու: Սակայն կը զգայինք թէ տարբեր էր ան: Նախ՝ որովհետեւ մեզմէ էր ան՝ մեր սերնդակիցը, որ հին սերունդի լաւագոյն ակադեմիկներուն ժառանգորդն ու շարունակողը ըլլալով հանդերձ՝ ունէր նոր ըսելիք, ի՛րը եւ մե՛րը: Եւ իր ու սերնդակիցներուն խօսքը ըսելու համար տրուեցաւ այդ առիթը: Աւելի ճիշդ է ըսել որ ան նուաճեց գայն, քանի որ, կեանքը կը սորվեցնէ մեզի թէ ոչինչ կը տրուի ինքնաբերաբար, եթէ նոյնիսկ ամենաարդար բանն է ուզուածը:

Ազգային մեր կեանքին մէջ, սփիւռքն ու հայրենիքը միասնաբար առած, հազուադէպ է որ սերնդակիցութեան գործընթացը բնականոն կերպով կատարուած ըլլայ: Երեւոյթ մը որ մեծապէս վնասած է մեր հասարակական կեանքի լաւագոյնս զարգացման: Ինչ ուրախառիթ է սակայն հաստատել, թէ այդ հազուադէպ պարագաներէն մէկը եղաւ Հայաստանի գրողներու հսկայ ու պատկառելի կազմակերպութեան մէջ սերնդակիցութեան

գործընթացը՝ երէցներուն տալով յարգանքի արժանի իրենց տեղը, իսկ նորերուն՝ գործելու, իրենք զիրենք դրսեւորելու առիթը, մեր հնամեայ եւ ադամանդեայ գրականութեան գանձը աւելի եւս ճոխացնելու, պրիսմակին վրայ նոր երես աւելցնելու, գեղեցկացնելու իրենց հերթը:

Վերջերս մեզի պատահութիւն տրուեցաւ աւելի մօտէն ճանչնալու յոբելեարը, եւ Վարդգէս Պետրոսեանը անուն մը ըլլալէ անդին անցնելով դարձաւ մտերիմ ընկեր մը, հարազատ եղբայր մը, Մարդ մը գլխադիր: Այդ պատահութիւնը մեզի տուաւ Թէքէեան Մշակութային Միութեան գրական ու գեղարուեստական ամսագիրը, որուն հիմնադրութեան 25 ամեակը պիտի տօնուէր Ապրիլ ամսուան ընթացքին՝ հանդիսութիւններու շարքով մը: Վիթիարի եւ յուզիչ նախաձեռնութիւն մըն էր կատարուածը, քանի որ ամբողջ սփիւռքի տարածքին վրայ առաջին անգամն էր որ գրական օրկան մը կը յանդգնէր այսքան մեծածախս եւ համահայկական կերպով տօնախմբել իր 25 ամեակը:

«Շիրակ» ի խմբագրական մարմինը ի շարս սփիւռքահայ բազմաթիւ գրական դէմքերու եւ աշխատակիցներու ուղղուած հրակէրին՝ հանդիսութեանց նախագահելու հրաւիրեց Հայաստանի Գրողներու Միութեան նախագահ Վարդգէս Պետրոսեանը, որուն ներկայութիւնը կը հաստատէր նաեւ այն մեծ իրականութիւնը թէ մէկ է հայ ժողովուրդը, մէկ գրականութեամբ:

Որքան ուրախ եւ հպարտ եղանք որ ան ընդառաջեց մեր հրաւիրին, եկաւ ու մեզի հետ մեր հրաւիրին, եկաւ ու մեզի հետ մեր հրաւիրին, եկաւ ու մեզի հետ մեր հրաւիրին: Ինչ փոյթ թէ կտոր մը միայն եւ կարճատեւ եղաւ այդ խաղաղութիւնը եւ մենք կարելիութիւնն իսկ չունեցանք ողջերթ մաղթելու իրեն արժանավայել կերպով:

Իր 21 օրեայ կեցութեան ընթացքին տաղանդաւոր գրողն ու թատերագիրն անկախ մենք իր մէջ գտանք ջերմ գրուցակիցը, խիզախ բեմբասացը, որ գիտէ սեւեր ըսել սեւ, եւ ճերմակին ալ ճերմակ, բայց նաեւ գիտէ չըսել ոչ մէկ բան, որ կրնայ ըլլալ անպատշաճ ու վնասակար: Եւ մենք հպարտ եղանք իրմով, իր անձին մէջ գտնելով նաեւ ճկուն եւ կարող վարչագէտը: Եւ այնուհետեւ մեզի համար պարզ դարձաւ թէ ինչպէ՛ս եւ ինչո՞ւ դեռ երիտասարդ Վարդգէսը նուաճեց նախագահութեան աթոռը, որ վարպետին մահէն յետոյ թափուր կը մնար:

«Շիրակ» ի յոբելեանական հանդիսութիւնները յատկապէս իր ներկայութեան շնորհիւ անցան արժանավայել շքեղութեամբ, եւ երբեմն իր ներկայութիւնը այնքան լեցուց մեր սրահներն ու սրտերը, որ կարծես թէ «Շիրակ» ի 25 ամեակէն աւելի Վ. Պետրոսեանի 50 ամեակն էր որ կը տօնէինք վաղահասօրէն:

Մեծ եղաւ իր այցելութեան բարիքը շիրակացիներուն համար, Թէքէեանի լայն շրջանակին համար, մանաւանդ այդպիսի օրերուն, երբ հանդիսութեանց ընթացքին արտասանուող խօսքին ու

### ՍՏԱՑՈՒԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎԱՉԷ ՍԵՄԵՐՃԵԱՆ «ՅԻՇԱՏԱԿԵԼԻ ԴԻՄԱՔԱՆԴԱԿՆԵՐ» (ՎԼԵՆՏԵՅԼ 2012)

Հրատարակութեամբ Թէքէեան Մշակութային Միութեան ներկայ հատորը կ'ընդգրկէ վաչէ Սեմերճեանի երեսուն տարիներու վրայ տարածուած հրատարակային յիշատակի հանդիսութիւններու եւ գիրքերու ներկայացումներու առիթով, բեմով եւ մամուլով էջերով ունեցած ելոյթներն ու յօդուածները:

326 էջերէ բաղկացող «Յիշատակելի Դիմաքանդակներ» մաքուր, խնամեալ եւ պատկերազարդ այս գեղատիպ հատորը կը բովանդակէ յօդուածներու եւ ելոյթներու հաւաքածոյ մը, որ արձագանգը կը հանդիսանայ հեղինակին իսկ բառերով - երեսուն երկար տարիներու վրայ երկարող ծանօթութիւններու, նաեւ՝ հաստատուած բարեկամութիւններու, որոնք յիշատակելի եւ անմոռանալի են իրեն համար:

Որպէս շնորհակալիք, գիրքն ունի նախաբան մը, ուր հեղինակը, առաջին իսկ հերթին, իր անմնացորդ շնորհակալութեան խօսքն ունի իր կնոջ՝ Սօսիին, որ միշտ հանդիսացած է իր առաջին եւ ուղղիչ ընթերցողը: Շնորհակալութեան խօսք ունի իր երկարամեայ բարեկամին՝ Երուանդ Ազատեանին, որուն շինիչ թելադրութիւնները անհրաժեշտ եղած են շարունակելու իր ստեղծագործ աշխատանքը: Նոյնպէս, իր շնորհակալութեան խօսք ունի, ընդհանրապէս գրքին սրբագրութիւններուն օժանդակողներ՝ Լիլիթ Քէհէեանին, Նազելի Գոճայեանին եւ Երուանդ Գոչունեանին եւ հատորը տպագրութեան պատրաստող՝ Մինաս Գոճայեանին:

Որպէս ներածական՝ գիրքն ունի Երուանդ Ազատեանի գնահատանքի գիրը, զոր կարելի է ամփոփել իր վերլուծական գիրի վերջին նախադասութեան մէջ, ուր փոխասցութեամբ Շահնուրի՝ պիտի ըսէր. «պատկերազարդ պատմութիւն սփիւռքահայոց...»:

Մեր գնահատանքին արժանի ներկայ հրատարակութեան մէջ, վաչէ Սեմերճեան իր քննարկման արժանացուցած է ընդհանրապէս իր գա-



ղափարի վաստակաշատ գրողներ եւ բարեկամ ստեղծագործողներ, որոնք յիշատակելի եւ սիրելի են իրեն:

Արդարեւ, Սեմերճեան իր ամբասիր գնահատութեան կ'ենթարկէ աւելի քան երեսուն գեղարուեստական գրող, հասարակական գործիչ, լրագիր, խմբագիր, ուսուցիչ, տնօրէն, պատմաբան, երգիծանկարիչ, ինչպէս՝ Անդրանիկ Անդրէասեան, Նուպար Ակիշեան, Օննիկ Սարգիսեան, Մասիս Արարատեան, Տօքթ. Զաւէն աւագ քհնյ. Արզումանեան, Վահրամ Մավեան, Ստեփան Արամ Գոմ ֆոնոմանեան, Երուանդ Ազատեան, Լիւսի Սիւլահեան, Եղիշի Բալայեան, Գերամ Ահարոնեան, Երուանդ Ակիշեանը, Սարգիս Վահագն, Արա Թօփեան, Վարդան Տիւլկերեան, Օշին Քէշիշեան, Տիգրան Թոսպաթ, Մովսէս Բազարեան, Երուանդ Պապայեան, Մարգարէտ Մարկոսեան, Արմէն Յարութիւնեան, Արա Ահարոնեան Զաւէն Մարտիկեան, Յակոբ Վարդիվարեան, Ալեք Գլըճեան, Հրանդ Աճէմեան եւ Յարութ Երեցեան, որոնցմէ շատեր իրենց պատկառազու ներդրումը ունեցած են մեր ազգային մշակութի գանձարանէն ներս:

ՏԱԳ

### ԱԵՏՏԻՍ ԲԱՅՐԱՄԵԱՆ «ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՐՁԱԴԱՐԱՆ»

Շնորհակալութեամբ ստացած ենք սպորտի վաստակաւոր մեկնաբան, «Նոր Օր» թերթին մարզական էջին երկար տարիներու պատասխանատու Աւետիս Բայրամեանի բացառիկ աշխատութիւնը «Հայկական Մարզագարան» վերնագրով:

Շուրջ մէկ դարու հայաշխարհին կապուող մարզական կեանքի ողջ պատմութիւնն է որ ամփոփուած եւ մէկտեղուած է սոցն հատորին մէջ: Աւելի քան 710 մեծագիր էջերու մէջ տեղեկութիւններ կան 3500 մարզիկներու մասին: Շուրջ 2000 նկարներ աւելի հետաքրքրական դարձուցած են գիրքը, որն բաժնուած է 7-ը գլուխներու:

Վաստակաւոր հեղինակը ամենայն խնամքով, մանրամասնօրէն արձանագրած է հայ միջազգային մարզախաղերու ախոյեաններու, մարզիկներու եւ մարզական հեղինակաւոր գործիչներու, սպորտի մեկնաբաններու մասին տեղեկանքներ, իրենց պատկերներով: Տրուած է նաեւ իւրաքանչիւր մարզիկի եւ մարզաձեւի նկարագրութիւնը եւ

պատմութիւնը:

Աշխատութեան հեղինակ Աւետիս Բայրամեանը ծնած է Սիրիայի Հայկապա քաղաքին մէջ 1940 թուին:

Ընտանեօք 1946 թուին ներգաղթած է Հայաստան: Պատանի տարիքէն հրապուրուած է մարզանքով եւ աշխատակցած է Հայաստանի մարզական թերթերուն: 1990 թուից հաստատուելով Լոս Անճելես, այստեղ եւս շարունակած է իր նախասիրած գործը, որպէս սպորտի մեկնաբան: Յարզ հրատարակած է «Մարզաշխարհի Անուանի հայերը» հատորը: Անտիպ է իր գրչին պատկանող «Արարատը եւ նրա նախորդները» գիրքը:

Աւետիս Բայրամեանի «Հայկական Մարզագարան» հատորը արժէքաւոր աշխատութիւն մըն է, որուն մէջ ամփոփուած են վերջին հարիւր տարիներու հայ մարզաշխարհի ողջ պատմութիւնը, արժէքաւոր պատկերներով:

Կը շնորհաւորենք հատորին հեղինակը եւ նորանոր յաջողութիւններ կը մաղթենք իրեն:

15th International Armenia Fund  
**Telethon 2012**  
 November 22 Thanksgiving Day



# OUR VILLAGE

Armenia Fund's International Thanksgiving Day Telethon will raise funds to build Multifunctional Community Centers in **Armenia** and **Artsakh** and to provide assistance to **Syrian Armenians** in distress.

City-State-Region	Station	Digital Channel	Cable Channel	Satellite	Time
<b>Northern California</b> San Francisco & Bay Area	<b>KTSF</b> Channel 26	26.1	<b>AT&amp;T U-VERSE</b> Channel 8 <b>CHARTER</b> Channel 98 <b>COMCAST</b> Channel 8	<b>DIRECTV 893</b> <b>DISH 26 or 8237</b>	8am-7pm PST
<b>Central California</b> Fresno & Central California	<b>KGMC</b> Channel 43	43.5	<b>COMCAST</b> Channel 200		8am-8pm PST
<b>Southern California</b> Greater Los Angeles Area	<b>KVMD</b> Channel 23	23.1, 31.1	<b>AT&amp;T U-VERSE</b> Channel 23 <b>VERIZON FiOS</b> Channel 23 <b>CHARTER</b> Channel 21 or 29 <b>COX</b> Channel 31 or 64 <b>TIME WARNER</b> Channel 9,17, 20, 21, 23, 28, 29, 29 or 48	<b>DIRECTV 31</b> <b>DISH 31</b>	8am-8pm PST

For all other locations please tune in to our live webcast at 8:00am-8:00pm PST

**webcast [www.ArmeniaFund.org](http://www.ArmeniaFund.org)**



**1-800-888-8897**



Designed by iStockphoto.com

[twitter.com/ArmeniaFund](https://twitter.com/ArmeniaFund)
[facebook.com/ArmeniaFund](https://facebook.com/ArmeniaFund)
[YouTube.com/ArmeniaFundUS](https://YouTube.com/ArmeniaFundUS)

### ԳՈՅՆԵՐԸ ԻՆՉՊԵՍ Կ'ԱԶԴԵՆ ՄԵՐ ԿՐԱՅ

Հին եգիպտացիները, ինչպես նաև չինացիներն ու հնդկները, գոյները կ'օգտագործէին քրոնիկական հիւանդութիւններու որպէս բուժում: Այսօր, գոյները կ'օգտագործուին վարքագիծին վրայ ազդելու համար: Fast Food տրամադրող ճաշարանները, օրինակի համար, կը կեդրոնան կարմիր գոյնին վրայ՝ յաճախորդներուն ախորժակը գրգռելու նպատակով: Իսկ հիւանդանոցները կը կեդրոնանան կանաչ գոյնին վրայ՝ հիւանդներուն շրդեքը հանդարտեցնելու միտումով:

Այսպիսով, յստակ է, թէ գոյները դեր կը խաղան մարմնի պաշտօններուն մէջ, ինչպէս օրինակի համար ախորժակին, քունին եւ տաքութեան, որովհետեւ գոյներէն իւրաքանչիւրը ունի ուժ մը, որ մուտք կը գործէ մեր աչքերէն ներս եւ կ'ազդէ հորմոնները կառավարող գեղձերուն վրայ:

Գոյները կրնան նաև հոգեկան իրազդածում ստեղծել, որովհետեւ մեր ներգործումները կապուած կ'ըլլան գոյնի յիշողութեան հետ: Կարգ մը անձեր գէշ զգացումներ կը վերջիչեն երբ տեսնեն գոյն մը, որ կապ ունեցած է անցեալի գէշ փորձառութեան մը հետ:

Ըստ այս մարզին մէջ հետազոտողներուն, գոյները խորքին մէջ կը դառնան մեզի. հանգիստ եւ հանդարտ կը զգանք մեր սիրած գոյներուն հետ, մինչ մեր չսիրած գոյները մեզի կը մղեն անհանգիստ եւ մտահոգ զգալու: Այս հետազոտողները նկատել կու տան, թէ մեր շուրջ գտնուող եւ մեր հագուստներուն գոյները կրնան ազդել մեր զգացումներուն վրայ: Օրինակի համար, եթէ անտրամադիր ես, շատ հաւանաբար բնագրային ձեւով պիտի ընտրես մուլթ գոյնի հագուստներ: Որոշ տեսութիւններ կը յանձնարարեն այսպիսի պարագաներու ընթացքին հազնիլ վառ գոյներ:

Քանի որ գոյները զգացումներու հետ առնչուած են, բազմաթիւ հոգեբուժներ գոյները կը գործածեն կարենալու համար մարդոց ներաշխարհը թափանցել: Անոնք իրենց հիւանդներէն կը խնդրեն գոյներով գծել՝ իրենց մասին արտայայտելու համար: Կարգ մը բուժողներ գոյնաւոր լոյսեր կու տան մարմնին որոշ կէտի մը վրայ՝ բուժելու կարողութիւնը ամրապնդելու համար:

Հոս կարելի է փորձել գոյներէն օգտուելու ձեւերը.

1) Փորձէ ծաղիկներուն գոյները. ինքզինքդ պատէ գանազան

գոյնի ծաղիկներով, որովհետեւ այդ կրնայ ներշնչել, ոգեւորել ու հանդարտեցնել, եւ այս բոլորը ըստ քու պէտքերուդ:

2) Գոյներու ուժանիւթը ներծծել. Թուղթ մը առ եւ քառակուսի կտորներու բաժնէ գաջն, ապա այդ կտորներէն իւրաքանչիւրը ներկէ տարբեր գոյներով, նաչէ՝ անոնց եւ ընտրէ՝ նախասիրած գոյնդ: Այդ ընտրած գոյնին վրայ կեդրոնացիր կարելի եղածին չափ, ներծծէ անոր կարողականութիւնը եւ ա՛ռ անկէ քեզի պէտք եղած ուժանիւթը՝ երբ անտրամադիր ես:

3) Կեդրոնացիր բնութեան վրայ. Կանաչ գոյնը աչքերը կը հանդարտեցնէ, հետեւաբար, երբ աչքերդ չոգնած են, կարելի է ժամանակ անցընել պարտէզի մէջ, ինչը որ կրնայ անձդ եւ տրամադրութիւնդ հանդարտեցնել:

**ԿԱՐՄԻՐ.** Գիտական ուսումնասիրութիւնն մը ցոյց կու տայ, թէ կարմիր գոյնը կը գրգռէ շրդեքու համակարգը եւ թէ կարմիրին մէջ գտնուող կրակի գոյնը կը նորոգէ մորթին եւ արեան բջիջները: Կարմիր գոյնը ուժանիւթը կ'աւելցնէ եւ կը ջերմացնէ:

**ՆԱՐՆՁԱԳՈՅՆ.** Այս գոյնը ախորժակ կը բանայ եւ կ'ըստի, թէ օգտակար է դիմադրողական համակարգին: Նարնջագոյնը կը քաջալերէ համագործակցելու, հետեւաբար, նպաստաւոր գոյն է ժողովասենեակի համար:

**ԴԵՂԻՆ.** Այս գոյնը կ'օգտագործուի ուղեղային աշխուժութիւնը աւելցնելու: Այս գոյնը կը մղէ ոգեւորուելու եւ ներշնչուելու: Ուսումնասիրութիւններէն մին փաստած է, թէ դեղին գոյնը կ'աւելցնէ խելացութեան եւ ուշիմութեան մակարդակը:

**ԿԱՆԱՋ.** Կանաչը միակ գոյնն է, որ կը հաստատուի եւ կ'ամբարպնդուի ուղղակի աչքին ցանցին մէջ, երբ հանգիստ վիճակի մէջ ես: Ասոր որպէս արդիւնք, կանաչ գոյնը կ'օգնէ զգացական հաւասարակշռութիւն ունենալու:

**ԿԱՊՈՅՏ.** Կապոյտ գոյնը նոյնպէս մկանները կը հանդարտեցնէ, մարմինը կը հազստացնէ եւ արեան ճնշումը կը նուազեցնէ: Կապոյտը կը կրճատէ լարուածութիւնը:

**ՄԱՆԻՇԱԿԱԳՈՅՆ.** Այս գոյնը կապոյտ գոյնէն յառաջացող շուք մըն է, որ կրնայ քնանալու օգտակար ըլլալ:

**ՎԱՐԴԱԳՈՅՆ.** Ուրախութեան գոյնն է, որ կը հանդարտեցնէ եւ գուարթութիւնը կը ներշնչէ հոգիին:

### ԱՆԱՆՈՒԽԸ

Զինաստանի մէջ զիտահետազոտողներ վստահեցուցած են, թէ անանուխի տերեւները օգտակար են քաղցկեղային բջիջները քանդելու: Անոնք վստահեցուցած են, թէ անանուխ բոյսին մէկ տեսակը օգտագործելով՝ կարելի կ'ըլլայ քիմիական նիւթ մը պատրաստել, որ կը քանդէ քաղցկեղային ուռերուն սնունդ տուող արեան մագերակները: Այսպիսով, ան պատճառ կ'ըլլայ որ այդ ուռերուն բջիջները մեռնին: Գիտահետազոտողները այս յայտնագործումը կը համարեն ճամբայ մը՝ քաղցկեղային հիւանդութիւններու դէմ պայքարող բուժիչ աւելի յաջող միջոցներու յայտնաբերման առնչութեամբ: Յոյսով ենք, որ այս տեղեկութիւնները փաստուին եւ անանուխը իսկապէս սատարէ մահացու այս հիւանդութեան դէմ պայքարին:

Գիտահետազոտողները նշած են, թէ քաղցկեղի բոլոր տեսակները արեան ճամբով իրենց հասած սնունդի պէտք ունին աճելու համար, հետեւաբար, արեան այդ

մագերակները քանդելը կ'օգնէ հարուածելու քաղցկեղի բոլոր տեսակները, ըլլայ ադ չափահասներուն թէ փոքրերուն մօտ:

Ինչպիսի՞ բոյս մըն է անանուխը: Անանուխը կանաչ բոյս մըն է, որ իւրաքանուկ բուրմունք ունի: Անոր ծառը 30 սանթիմետրէն աւելի չի բարձրանար եւ կրնայ գետին մնալ երեք տարի, որմէ ետք կը կորսնցնէ իր յատկութիւններն ու գործնականութիւնը:

Անանուխին տերեւները կը քաղուին, շուքին տակ կը չորցուին եւ ապա մաղուելով՝ գանազան պէտքերու համար կը գործածուին: Զայն կարելի է խմել խաշելով, իսկ մաղուած անանուխը կարգ մը ճաշերու եւ աղցաններու վրայ աւելցնելով՝ համեղ կը դարձնէ գանոնք:

Անանուխը կը վերանորոգէ արիւնը, կ'արգիլէ սիրտխառնուքը, ստամոքսի ցաւերն ու թթուութիւնը, անոր տերեւները ծամելով կարելի կ'ըլլայ ակուալի ցաւը թեթեւցնել, ինչպէս նաև լաւ դեղ է պրկուածութեան դէմ:

### ԾԻՇԴՆ ՈՒ ՍԻԱԼԸ ԵՂՈՒՆԳՆԵՐՈՒ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

1) Եղունգին վրայ երեւցող ճերմակ կէտերը արդեօք ապացոյց են մարմնին մէջ քալիումի պակասի:

Ոչ: Այս կէտերը երբեք կապ չունին քալիումին հետ: Անոնք կը յառաջանան պտիկ եւ կրկնուող զարնուածքներէ, որոնց կ'ենթարկուի եղունգը ինչպէս երբ համակարգիչին վրայ գորաւոր կերպով կը շարենք, կամ օրինակ եթէ փորձենք եղունգով տուփ մը բանալ եւ կամ այլ տիպի արարքներէ: Եղունգները կրկնուող կերպով ներկելը կը տկարացնէ եւ հետքեր կը ստեղծէ անոնց վրայ:

2) Իսկ այն գիծերը, որոնք երբեմն կը գծուին եղունգին վրայ, արդեօք անոնք ծերութեան եւ տարիքի յառաջացման նշաններէն են:

Այո եւ Ոչ: Այդ գիծերը նշան են եղունգներու ծերութեան, սակայն կարգ մը մարդիկ կանուխ տարիքին կը տառապին անկէ, իսկ ուրիշներ երվեք: Ինչպէս նաև այս երեւոյթը կարելի է առնչել հորմոնային (տարածուած երեւոյթ մըն է դաշտանադադարի հանգրուանին) կամ որոշ գեղձերու աշխատանքի

թերացումին հետ:

3) Եղունգները եւ անոր շուրջի միսերը կրծելը կ'ազդէ՞նայս հարցին մէջ:

Այո: Այս արարքը թոյլ կու տայ, որ մանրէները ազատօրէն բազմանան:

Խրատ՝ եղունգներդ միշտ մաքուր պահէ, մանաւանդ եթէ պարզ արիւնահոսութիւն մը պատահի այդ միսերուն շուրջ, եւ նախընտրելի է, որ անմիջապէս վերջ դնես այս սովորութեանդ:

4) Եթէ եղունգը ինչայ կարելի՞ է անոր օգնել, որպէսզի վերըստին աճի:

Այո: Եթէ անոր արմատները չեն վիրաւորուած: Այս մէկը յաջողելու համար վեց ամիս պէտք է ձեռքի եղունգին համար, իսկ ոտքի եղունգին համար՝ մէկ տարի: Այս միջոցին, պէտք է լաւ հոգ տանիլ եղունգին տեղին, այսինքն՝ մեղմօրէն մաքրել եւ լաւ չորցնել գաջն: Հարկ է նաև գաջն օրուան ընթացքին պաշտպ անել բարակ վիրակապով մը, որմէ կարելի է ձերբազատուիլ գիշերները:



**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**  
Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկաք գանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ:  
G.Y.O.  
1060 N. ALLEN AVE.  
PASADENA, CA 91104

ST. GREGORY ARMENIAN CHURCH  
**ԿԵՐԱՆՈՐՈՂՈՒԿ** Geragos BANQUET HALL OF PASADENA  
**NEWLY REMODELED**

*Now ready to host your*

- Wedding
- Baptism
- Anniversaries
- All other happy & sad events.
- Գարսանիք
- Մկրտութիւն
- Տարեդարձ
- Եւ ամէն ուրախ ու տխուր առիթներ:

**ՎԱՐԷ 562-715-8730 ՎԱԿԷ**

**Լաւագոյն եւ յարմարագոյն գիւնեքով ձեզ կ'սպասարկենք**



### ՊԵՅՐՈՒԹԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԵՆ ՇՐՋԱՆԱԽԱՐՏ ՀԱՅ ԲԺԻՇԿՆԵՐ

Շարունակում է 7-էն

բժիշկ եւ ճանչցում է «Սըր Թապիա Լուիսի» անունով:

Համաշխարհային Ա. Պատերազմին ծառայած է թրքական բանակին մէջ որպէս բժիշկ: Յուլիս 1915-ին, իր մտերիմ բարեկամ Տոքթ. Յովհաննէս Թերզեանի հետ, կարինէն Երզնկա ճանապարհին վրայ սպաննուած է թուրք սպայի մը հրահանգով: Տոքթ. Լուիսի ընտանիքին փրկուած են միայն իր քոյրն ու քեռայրը՝ Տէր եւ Տիկ. Լ. Լեւոնեան, որոնք հաստատուած են Ուոթերթաուն (Ա.Մ. Նահանգներ), Մեսչուսեթ:

Ծերձիկ Գ. Հեթիւմեան-Ծնած է Քեսապ, 1886-ին, Աւետարանական ընտանիքի մը յարկին տակ: 1903-ին, Պասակաւոր Արուեստից վկայականը ստացած է Այնթապի Գոլէճէն, իսկ բժշկութեան վկայականը՝ Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն, 1908-ին: Համաշխարհային Ա. Պատերազմին ծառայած է թրքական բանակին մէջ եւ սպաննուած Անտիոքի մէջ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱՐԱՊԵՏ ԹԵՐԶԵԱՆ - Ծնած է 1888-ին, Տիգրանակերտ, Հայ Առաքելական ընտանիքի մը յարկին տակ:

1899-ին, որպէս ուսանող եկած է Պէյրութ: 1906-ին ստացած է Պասակաւոր Արուեստից վկայականը, եւ 1910-ին՝ բժիշկի տիտղոսը: Որպէս թրքական բանակի հազարապետ բժիշկ, մասնակցած է Պալքանեան պատերազմին: Համաշխարհային Ա. Պատերազմին ծառայած է Երզնկայի Ազիզիէ Հիւանդանոցին մէջ: Յուլիս 1915-ին, կարինէն Երզնկա ճանապարհին վրայ սպաննուած է թուրք սպայի մը հրահանգով, իր մտերիմ բարեկամ Տոքթ. Լուիսի Հալպեանին հետ: Հոս հարկ է յիշել, որ Տոքթ. Թերզեան AUB-ի Հայ Ուսանողական Միութեան հիմնադիրներէն եղած է եւ Տիգրանակերտի մէջ հաստատած է Յառաջդիմական Վարժարանը:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԻՆԱՍ ԳԱՖՅԵԱՆ - Ծնած է Պոլիս, 1885-ին, Հայ Առաքելական ընտանիքի մը յարկին տակ: 1911-ին ստացած է բժշկութեան վկայականը: Համաշ-

խարհային Ա. Պատերազմին ծառայած է Երզնկայի Ազիզիէ Հիւանդանոցին մէջ: Յուլիս 1915-ին սպաննուած է հիւանդանոցի բակին մէջ:

ՏԻԳՐԱՆ Վ. ՀԱԼԱՃԵԱՆ - Ծնած է Կիւրին, 1882-ին, Հայ Աւետարանական ընտանիքի մը յարկին տակ: Պասակաւոր Արուեստից վկայականը ստացած է Եփրատ Գոլէճէն: 1912-ին ստացած է բժշկութեան վկայականը Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն: 1913-1915, որպէս բժիշկ ծառայած է Կիւրինի մէջ, բայց Համաշխարհային Ա. Պատերազմին զրկուած է Երզնկայի Ազիզիէ Հիւանդանոցը, ուր սպաննուած է Յուլիս 1915-ին: Տոքթ. Հալաճեանի կինը՝ Էլիզա, զոհուած է Մեծ Եղեռնին, սակայն դուստրը՝ Բերսաբէ, հրաջքով ազատած է ու հաստատուած Փրովետանսի (Ա.Մ. Նահանգներ) մօտերը:

ՏԻԳՐԱՆ Ա. ԳԱՍՊԵԱՆ - Ծնած է Տիարպեքիր, Հայ Առաքելական ընտանիքի մէջ: 1912-ին կը ստանայ իր բժշկական վկայականը ու կը մեկնի Ուրֆա, ծառայելու Գերմանական Հիւանդանոցին մէջ: Համաշխարհային Ա. Պատերազմին կը ծառայէ թրքական բանակին ու 1915-ին կը սպաննուի Էրզրումի մէջ:

ՄԱՔՍՈՒՏ ՅԱԿՈՒ ԱՔԻԿԵԱՆ - Ծնած է Թոքաթ, 1888-ին, Հայ Առաքելական ընտանիքի յարկին տակ: Անաթոլիա Գոլէճէն ստացած է Պասակաւոր Արուեստից վկայականը, ապա՝ բժշկութեան վկայականը Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն, 1914-ին: Աւարտելէ ետք, որպէս բժիշկ կը ծառայէ Անաթոլիա Գոլէճի հիւանդանոցին մէջ: Երբ Համաշխարհային Ա. Պատերազմը կը յայտարարուի, կը ստիպուի միանալ թրքական բանակին եւ կը սպաննուի 1915-ին:

ՆՇԱՆ ՅՈՎՍԷՓ ՊԱԳԱԼԵԱՆ - Ծնած է Տիարպեքիր, Հայ Առաքելական ընտանիքի մէջ: Պասակաւոր Արուեստից վկայականը ստացած է Այնթապ Գոլէճէն, իսկ բժշկութեան վկայականը՝ Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն, 1914-ին: Սպաննուած է 1915-ին, թրքական բանակին ծառայութեան ընթացքին:

ՄԵՍՐՈՊ ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՆ-

ԵԱՆ - Ծնած է Զերա, 1888-ին, Հայ Առաքելական ընտանիքի մէջ: 1914-ին ստացած է բժիշկի տիտղոսը, որմէ ետք ծառայած է թրքական բանակին եւ սպաննուած 1915-ին:

ՎԱՐԴԱՆ ՅԱԿՈՒ ՓԻՐԱՆԵԱՆ - Ծնած է Կիւրին, 1885-ին, Աւետարանական ընտանիքի երզնկայի տակ: Այնթապ Գոլէճէն ստացած է Պասակաւոր Արուեստից վկայականը: 1917-ին ստացած է բժշկութեան վկայականը Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն: Համաշխարհային Ա. Պատերազմի ընթացքին ծառայած է թրքական բանակին: 1918-ին սպաննուած է Պաղեստինի մէջ:

Վատահաբար, այս թիւը շատ աւելի բարձր եղած է, որովհետեւ Պէյրութի Ամերիկեան Համալսարանի տարեգիրքերուն մէջ ուրիշ շատ բժիշկներ կան, որոնց մասին միայն նշուած է, թէ Համաշխարհային Ա. Պատերազմի ընթացքին մահացած են:

Հայկական աղբիւրներ կ'ըսեն, թէ մօտ 67 հայ բժիշկ ու վիրաբոյժ սպաննուած են Մեծ Եղեռնի ընթացքին: Այս թիւին 13-րդը Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն շրջանաւարտ են, ինչ որ մեծ արժէք կու տայ այս յուշատախտակին:

Պայքարող Տաճ, Պէյրութի Ամերիկեան Համալսարանի երրորդ նախագահը (1923-1948) ըսած է, թէ այս բժիշկները իրենց զոհողութեամբ համալսարանը բաց պահած են պատերազմին ընթացքին, եւ թէ ձեմալ փաշա պատրաստ էր ամէն

գնով համալսարանին պահանջները գոհացնելու, որպէսզի այս բժիշկները բանակին ծառայութեան մէջ պահէր:

Իմ կարծիքովս, այս յուշակոթողը ցոյց կու տայ հայ բժիշկներուն վեհանձն նկարագիրը Համաշխարհային Ա. Պատերազմի ընթացքին: Երբ իրենց ընտանիքները կը ջարդուէին թուրքին ձեռամբ, անոնք հաւատարմութեամբ կը ծառայէին թրքական բանակին, առանց գիտնալու, թէ իրենք ալ պիտի միանային Մեծ Եղեռնի նահատակներու փաղանգին:

\*\*\*\*\*

ԱՂԲԻԻՐՆԵՐ

-Սիսակ Վարժապետեան, «Հայերը Լիբանանի Մէջ»:

-Bayard Dodge, «The American University of Beirut».

-Avedis Sanjian, «Armenian Communities in Syria Under Ottoman Dominion».

-A.U.B. Directory of Alumni 1870-1952.

-25-Ամեակ Հայն սանդղակային Միութեան Պէյրութի Ամերիկեան Համալսարանի:

-Vahakn Dadrian, «The Role of Turkish Physician in the World War I Genocide of Ottoman Armenians» (յօդուած):

-Գասպար Կարոյեան, «Մեծ Եղեռնի Նահատակ Հայ Բժիշկներ»:

-Stephan Penrose, «That Day May Have Life: The Story of the American University of Beirut 1866-1941».

## ԼՈՅՍ ՏԵՍԱԲ ՅՈՒՇԱՐՉԱՆ ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏ ԲԵՆԻԱՄԻՆ ԺԱՄԿՈՉԵԱՆԻ



Սրտաբույս նուրբ գիրքէն օրինակ մը ստանալու համար հեռաձայնել՝ (626) 797-7680 կամ (818) 429-2322 քիւերուն


Լարակազմ, մաքուր տպագրութեամբ, 580 էջերէ բաղկացող գիրքը: Ժողովածուն լոյս ընծայուած է Բենիամին Ժամկոչեանի նախկին սաներուն կողմէ, որպէս երախտիքի տուրք անոր ծննդեան 115 ամեակի առիթով: Յուշարձան ժողովածուն, նաեւ իր մէջ կ'ամփոփէ իրենց սիրեցեալ տնօրէնի կրթական, մանկավարժական, ազգային-մշակութային, Պէյրութի Սահակեան վարժարանի կէս դարեայ կենսապատմը: Յուշարձան ժողովածուն կը մատուցէ Բենիամին Ժամկոչեանի ժամանակիցներուն յուշերու ծաղկաբաղը:

ԿՈՉ ՍԱՀԱԿԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԻ ՍԱՆ-ՍԱՆՈՒԳԻՆԵՐՈՒՆ Բազմավաստակ տնօրէն Բենիամին Ժամկոչեանի սան-սանուհիներէն անոնք որոնք Սահակեան Բարձրագոյն Վարժարանի կապակցութեամբ լուսանկարներ ունին իրենց մօտ, թող բարի ըլլան հեռաձայնել հետեւեալ քիւերուն: (818) 429-2322 Տիկ. Վարդուի Գազանճեան (626) 422-9121 Տիկ. Արուսեակ Գրիգորեան

# VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books  
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ Հին Գիրքերու Նորոգութեան Համար Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱՉԱԲԱԿԻԱՆԻՆ



**Vahe Atchabahian**  
1870 E. Layton St. • Pasadena, CA 91104  
626-354-5924 • vamedia@yahoo.com

### ԹԱՐԳԱՆՉԱՑ ՏՕՆԸ ԿԼԵՆՏԵՅԼԻ ԳՐԱԴԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ

Շարունակում է ծ-էն

լով, մենք կ'արտայայտենք մեր երախտագիտությունը, անսահման շնորհակալությունը այն երախտաշատ հայրերուն, որոնք կարելի դարձուցին այս հրաշագործությունը, զոր կը կոչենք Հայ գիրքերու գիւտ: Արդար է, որ իրենցմով ոգեշնչուած, անգամ մը եւս հաստատ վճռակամութեամբ, ազգովին անցնինք ուղղակի գործի, ոչ միայն պահպանելու, այլ մասնաւոր շարունակելու գրական-մշակութային կոթողական այն աւանդը, զոր մաշտոցեան Ոսկեդարով պարզեւեցցաւ հայ սերունդներուս: Որովհետեւ բաւարարուելով անցեալի սիրանքներուն, գովեստով միայն, սուրբ սուած կ'ըլլանք ինքնախաբուութեան, անտեսած կ'ըլլանք այդ աննման ժառանգին, իսկ սպառնացող մերօրեայ բազում վտանգներն ու սարքանքները, որ կամայ թէ ակամայ արդիականութեան եւ «գլոբալիզմ» կոչուող տիեզերականութեան հեզասահ յորձանուտներով կու գան մեզ տանելու համատարած ուժացումի եւ այլասերումի: Կենսական է ուրեմն, որ մշտապէս ի մտի ունենանք անցեալի եւ ներկայի այս սերտ կապակցուող գուգահեռականը, երբ կը փորձենք արժեւորել եւ գնահատել թարգմանչաց շարժումին աննախընթաց տարողութիւնը»:

Եւ այսպէս, իր իսկ նշած այդ «աննախընթաց տարողութեանը» նուիրուած մի բանախօսութեամբ, Սարգիս Վահագնը գրաւեց ներկաների համակ ուշադրութիւնը, անդրադառնալով հայ գրի գիւտի եւ թարգմանչաց շարժման ու վարպետների պանծալի գործի բոլոր հանգուցային հարցերին, չմոռանալով նաեւ մերօրեայ ցաւոտ հարցը՝ հայ դպրոցներից դուրս մնացած 50,000 հայորդիներին: «...հսկայ բանակ մը, որ այսօր, նիւթականի չգոյութեան պատճառով, կը յաճախէ պետական ձրի վարժարանները եւ դատապարտուած է հեռանալու մեր գիր ու լեզուէն, ենթակայ այլասերման, ուշ կամ կանուխ՝ ձուլումի: Զիրենք կորսնցուցած ըլլալու գաղափարին հետ հաշտուած ենք արդէն...: Կ'երեւի՝ այո՛: Պիտի ըսուի, թէ գրողներս ի՞նչ առնչութիւն ունինք այդ հարցին հետ: Սակայն ունինք. չէ՞ որ անդադար կ'ողբանք ընթերցողի պակասը, առանց հարց տալու, թէ ուրիշ պիտի գայ այդ երանելի ընթերցողը: Լուծումը պարզ է, եւ լուծումը կրնայ գալ մնացեալ յիսուսն հագարէն եթէ կամեցողութիւն

ունենանք թեւերնիս սոթտել՝ գործի անցնիլ: Հայ դպրոցները ծախսալի են ու մեր ուժերէն վեր է՝ նորերը բանալ: Բայց կայ օժանդակութիւնը՝ «չարթը» դպրոցներու կարելիութիւնը: Անոնք ամերիկեան պետական պիւտձէով վարկաւորուած, որոշ ծրագրումով դասաւորուած դպրոցներ են անոնք որոշակի համայնքի մը տրամադրութեան տակ դրուած եւ համայնքին լեզուական թեքումով դասաւանդութեամբ առանձնաշնորհուած: Այդպիսի դպրոց մը արդէն բացուած է եւ մէկ տարի է իվեր կը գործէ յաջողութեամբ, շնորհիւ տեսլապաշտ հայ անձի մը՝ յանձնիս պարոն Գաբրիէլ Ինճեճիկեանին, որ ժամանակին եղած է «Ֆերասեան» ազգային վարժարանին հիմնադիրը: Կը գիտակցիմ, գրողներուս անմիջական պարտականութիւններէն չէ այդ նախաձեռնութիւնը, բայց սատար հանդիսանալ նման ձեռնարկներու այդքան ալ խորթ չի թուիր... Ինչո՞ւ չմտածել այդ ուղղութեամբ ալ: Փորձենք: Ա՛յս է թելադրանքը Մեսրոպեան թարգմանչաց մեծ շարժումին: Տարածել հայ լեզուն եւ գիրը, մեր միակ անցագիրը դէպի յաւերժութիւն»:

Ի յաւելումն Սարգիս Վահագնի խօսքի յարուցած խանդավառութեան, Գէորգ Քրիստինեանը, բուն ծափողոյնների ներքոյ բեմ հրաւիրեց ասմունքող պատանեկուհիների հնգեակին: ԿՀԳՄ վարչութեան որոշմամբ սոյն ձեռնարկին հրաւիրուած էին Սրբոց Նատակաց Ֆերասեան ազգային վարժարանի աշակերտները եւս: Արձակագիր Պողոս Գուրբեանը բանակցեց էր դպրոցի տնօրէնի հետ, ուստի եւ ուսուցչուհի Անի Պէրթիգլեանն, իր ասուհիներին՝ Զուլիա Սուրֆագեան, Նայրի Խաչատուրեան, Գարինա Խտրեան, Կարնի Տէտէյեան եւ Անի Կէտիքեան, ուղեկցել էր՝ մասնակից լինելու գրական երեկոյին: Գէորգ Էմինի «Մենք» չքնաղ բանաստեղծութեան խմբական ասմունքով, վարժարանի հինգ աշակերտուհիները գեղարուեստական մեծ հաճոյք պատճառեցին բոլորին: Նման մասնակցութիւնը աննախընթաց երեկոյթ էր ԿՀԳՄ գրական երեկոյների ծրագրերում: Յուսանք, թէ վերջինը չի լինի: Զեռնարկի մէկ այլ զարդն էլ բանախօսութիւնների միջեւ հնչող երաժշտական ընդմիջումներն էին, երբ հատուածներ էին ցուցադրուում Սեպուհ Աբգարեանի դեկավաւրած «Գոհար» երգչախմբի համերգային ծրագրերից:

### ՎԱՐԱՍԵՌԻԿ ՎԱՐԴԳԵՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Շարունակում է ծ-էն

երգին յաճախ կ'ընկերակցէր ռումբերու խժալուր յանկերգը: Աւելի մեծ յանձնառութիւններուն տակ մնացինք մենք բոլորս՝ պահելու լիբանահայ գաղութը ազգային-մշակութային իր ամբողջ կառուցուածքով աչքը հայրենիքին ուղղած իր ժողովուրդով, որպէսզի Լիբանանէն արտածուած մտաւորականներով աւելի եւս տոկայ հայ սփիւռքը:

Ես վստահ եմ որ նոյնքան ծանր յանձնառութիւններով վերադարձաւ նաեւ վարդգէս Պետրոսեանը, իր պաշտօններուն ու պարտականութիւններուն վրայ

Յաջողը ելոյթը Պողոս Գուրբեանինն էր: Գէորգ Քրիստինեանը նրան եւս ներկայացրեց ըստ արժանուոյն, նշելով, թէ արձակագրի անունն ու վաստակը տանեակ տարիներ առաջ իսկ արդէն յայտնի էին ոչ միայն Սփիւռքում, այլեւ հայրենիքում: Ապա բեմ հրաւիրեց նրան: Արձակագրի խօսքը կառուցուած էր արդի գեղագիտական ոլորտի մտահոգութիւնների վրայ: Ահա մի քանի միտք. «Վերջին երկու տասնամեակին Հայաստանի բարդ իրավիճակն ու դիմագրաւած մարտահրէճները ամբողջութեամբ կլանեցին հայրենի թէ սփիւռքահայ գրող մտաւորականութեան ուշադրութիւնն ու ներուժը: Այսօրուան շօշափած մեր նիւթը գուցէ ժամանակաւոր փախուստ է այդ իրականութենէն: Պիտի չփորձուինք մեր ժողովուրդին կենսաբան մէջ գեղագիտական զգայնութեան տեղն ու չափանիշները ճշգրտել, սակայն գաղտնիք չէ, թէ յառաջացած մշակութային մասնակի մօտ գեղեցիկին գիտակցութիւնը արթնցնելով՝ անոր ճաշակը զարգացնել... Գաւթ հայկական հեռատեսիլի մակարդակին՝ հայրենիքէն ներս, թէ Սփիւռքի տարածքին: Յուցադրուող սերեալները այնքան վատորակ են նկարահանումով ու ընդգրկած թեմայով, որ մարդ կը տարուի մտածելու, թէ ի՞նչն է հայը ներգրաւողը յատկապէս մաֆիական ֆիլմերու. յետոյ ալ երբ «Հարնաբար» ի նման ցաւալի դէպքեր կը պատահին, կը ցնցուինք, կը զարմանանք... Ա՞յս ձեւով ճաշակը զարգացնել... Կամ Սփիւռքի տարածքին գանք հայե-

աւելցուցած նոր մը, գուցէ փոքր բայց սիրելի պաշտօն մը՝ «Շիրակ» իմբագրութեան պատուակալ անդամի հանգամանքը:

Իր յիսնամեայ յոբելեանին առթիւ «Շիրակ» ամսագրին եւ թէքեան Մշակութային Միութեան անունով կ'ողջունեմ գինք, մաղթելով քաջաւորութիւն եւ ստեղծագործական յարաճուն վերելք, եւ նաեւ երկրորդ յիսնամեակի մը տօնակատարութիւնը՝ ստեղծագործ աշխատանքով եւ արդար ձգտումներով աւելի հզօրացած եւ գեղեցկացած մայր հայրենիքի չքնաղ մայրաքաղաք Երեւանի մէջ:

«Զարթօն», 4 Հոկտեմբեր 1982

րէն թերթերուն, որ առանց բացառութեան ենթակայ են պիւտձէական սեղմումներու. յայտնի գրիչի մը յաջողագոյն յօդուածը աղքատ էջադրումի պատճառով իր բուն արժէքէն շատ բան կը կորսնցնէ ընթերցողի աչքին: Ի՞նչ եղաւ այս ժողովուրդի ճաշակին, իր գեղագիտական ըմբռնողութեան: Հարցում, որ այս պահուս սրտցաւ հայու մեր միտքը կը չարչրկէ. կարելի պիտի ըլլա՞յ արդեօք զարթօնք մը, վերածնունդ մը եւս կերտել երբ ամբողջ սկսի մեր պետականութիւնը... Իցիւ թէ կարելի ըլլար... Իցիւ թէ գար վերածնունդ մը ախտավարակ, անճաշակ մեր մտածողութիւնը պայթեցնելու... ու մեզ մեր նախահայրերու ճաշակին ու գեղագիտական ըմբռնողութեան վերադարձնելու...»:

Երեկոյի աւարտին, Քրիստինեանը «Նարեկական» խորագրով իր մի պօէմից հատուած կարդաց, ապա ԿՀԳՄ նախագահ Շահէ Քէօրօլեանը բեմ հրաւիրեց ԿՀԳՄ վարչակազմին եւ «Ֆերասեան» ի աշակերտուհիներին, քանզի Պողոս Գուրբեանը հինգ աղջիկներին եւ նրանց ուսուցչուհուն նուէր գրքեր էր յանձնելու. որդու՝ Ռաճեր Գուրբեանի «East of Byzantium» գեղարուեստական շարժանկարի գծագրովէպը, նաեւ իր «Փտախտը» վէպը, իսկ Քէօրօլեանը իմբին ներկայացնելու էր ԿՀԳՄ շնորհակալագիրը: Անշուշտ երեկոն իր լրումին հասաւ շատ բարձր տրամադրութեամբ, եւ մարդիկ գոհունակութեամբ հեռացան դահլիճից, հետները տանելով հրաշալի ձեռնարկից ստացած լիցքն ու վայելքը:

**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**  
 1060 North Allen Ave  
 Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած են յարմար վարձքերով  
 Դետաքրքրուողներէն հեռաձայնել՝ (626) 398-0506

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**

**ՓԱՍՍԻՏԻԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ՀԱՄԱՐ) ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻՅԵՐՈՒ ՀԱՄԱՐ**

**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**

**ՍԱՆՐԱՍԱՆՈՒԹԻՒՆԵՐ՝ ՀԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680**


**REQUEST FOR PROPOSALS (RFP# 7575) PROGRAM/PROJECT MANAGEMENT SERVICES**

The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified firms to perform Program/Project Management services for the planning and administering of its capital improvements and new construction projects.. Copies of the RFP may be obtained beginning October 21, 2012 online at [www.hacla.org/ps](http://www.hacla.org/ps). Proposals will be accepted until 2:00 pm (PST), November 16, 2012 at 2600 Wilshire Blvd, 4th Floor, Los Angeles CA 90057.

11/1, 11/8/12  
 CNS-2397089#  
 MASSIS WEEKLY

### ՈՉ ԵՄՍ Է Տ. ԲԱԲԳԵՆ Ա. ՔՅՆՅ. ՄԱԳՍՈՒՏԵԱՆ

Ցաւով տեղեկացանք թէ Երկու- շաբթի, Հոկտեմբեր 15, 2012-ին, Արլինկլիթնի մէջ, Մեսեչուսէթ (Մի- ացեալ Նահանգներ) վախճանած է գաղափարի հաւատաւոր նուիրեալ Տ. Բաբգէն Ա. Քհնյ. Մագսուտեան, իր 103 տարեկան խոր ծերունագարդ հասակին:



Իբրեւ հոգեւոր հովիւ եւ իբրեւ համատարած յարգանքի արժանա- ցած վաստակաշատ եկեղեցական՝ Տ. Բաբգէն Ա. Քհնյ. Մագսուտեան աւե- լի քան 60 տարի նուիրումով ծառա- յեց Հայց. Առաքելական Եկեղեցոյ:

Մնած էր Ատանա եւ 1921-ին, Կիլիկիոյ պարպումի շրջանին, մօրը հետ ապաստանած էր Կիպրոս: Ապա անցած էր Լիբանան եւ 1930-ին յաջողութեամբ աւարտած Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դպրե- վանքի երկամեայ յատուկ դասընթացքը: Շրջան մը (1942-43) Երկրորդ Աշխարհամարտի ընթացքին Լիբանան կայք հաստատած բրիտանական զօրքերուն մօտ քարտուղարական պաշտօն վարելէ ետք, շուրջ երկու տարի խմբագրած էր Ռամկավար Ազատական Կուսակ- ցութեան պաշտօնաթերթ «Զարթօնք» օրաթերթը, միաժամանակ հաստատելով եւ բանեցնելով նաեւ իր անձնական տպարանը:

Տանն Կիլիկիոյ Երջանկայիշատակ Գարեգին Ա. Յովսէփեանց Կաթողիկոսի յորդորով, 1949-ին քահանայ ձեռնադրուելէ ետք, 1951- ին, գործուղուած էր Միացեալ Նահանգներ, պաշտօնավարելու համար իբրեւ Պոստոնի Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցոյ հոգեւոր հովիւ: 23 տարիներու համապարփակ եւ ակնյայտօրէն բեղմնաւոր ծառայու- թենէ ետք, Տ. Բաբգէն Ա. Քհնյ. Մագսուտեան հանգստեան կոչուած էր 1974-ին, մինչ կը շարունակէր ծառայել իբրեւ Պատուակալ Հովիւ, երկարամեայ ջանադիր աշխատակցութեամբ Մուխի թէ Թեմի բազ- մաթիւ գործունէութիւններուն:

Երջանկայիշատակ վազգէն Ա. Ամենայն Հայոց Հայրապետի կողմէ, իբրեւ արժանի գնահատանք բոլորանուէր իր ծառայութիւններուն, Տ. Բաբգէն Քհնյ. Մագսուտեանին շնորհուած էր Աւագ Քահանայի կոչում:

Խորապէս դաւանելով ազգային եւ հայրենասիրական յստակ համոզումներ, Տ. Բաբգէն Ա. Քհնյ. Մագսուտեան տարիներ շարունակ, անսակարկ նուիրումով վարեց Պէյրութի Թէքէեան վարժարանի Պոստոնի Օժանդակ Մարմնի ատենապետութիւնը: Այս բնագաւառէն ներս եւս, ինչպէս բազմաթիւ իր այլ գործունէութիւններու ծիրէն ներս, իր աջ բազուկը հանդիսացաւ Երէցկիին Ազատուհի (Գասապեան) Մագսուտեանը, որ մահացաւ 1986-ին:

Նորոգ վախճանեալ Տ. Բաբգէն Ա. Քհնյ. Մագսուտեանի Տան Կարգը տեղի ունեցած է Ուոթթըրթաունի Ս. Յակոբ Հայց. Եկեղեցոյ մէջ Ուրբաթ, Հոկտեմբեր 19-ին, իսկ վերջին Օծման եւ թաղման կարգը՝ Շաբաթ, Հոկտեմբեր 20-ին:

### ՆՈՒՐԱՏԻՈՒԹԻՒՆ

ՍԱՐԳԻՍ ՄՈՒԹԱՑԵԱՆԻ մահուան առաջին տարելիցին յիշատակին առթիւ Տէր եւ Տիկ. Պօղոս եւ Ազատուհի Մութաֆեան եւ զաւակունք (Լուիզիանայէն) \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

### ՄՐՏԻ ԵՒ ՅՈԳՈՒ ԱՐՇԱԼՈՅԱԸ

Շարունակուած էջ 13-էն

ստեղծագործական տաղանդին ապաւինած: Մարդն ու Աստուած լաւ են հասկանում միմեանց, Մարդ ու Աստուած ծնունդ ու ապրում են միասին, միակամ ու սիրով...:

Մարդ ու Աստուած երկրային ու շօշափելի: Իհարկէ, այդպէս չէր կարող լինել. դա գրողի իդեալն է, երեւակայութեան պտուղը, մարդ- կային պատմութեան գործընթացը աւելի կոշտ է, դժուար ու դժամ: Գրող Լազարեանի սիրոյ աղբիւրը բիւրեղեայ է, աստուածահամայն ու իդեալիստական: Բայց գրողի այդ սիրառատ ոճը, հայասիրութեան անթաքոյց մաքրագործման շուն- դը շատ է պէտքական մեր ժամա- նակի նիւթապաշտ մարդուն, մեր օրերին, մեր ապրելակերպը բուժե- լու համար:

Անշուշտ ամէն ինչ երեւակա- յութեան պատրանք չէ. Լազարեանն ուսումնասիրել եւ օգտագործել է պատմական մի շարք աշխատու- թիւններ: Դրանցից են՝ Մարտիրոս Գառուբէանի, Մովսէս Խորենացու, Կորիւնի, Կարէն Մուսայելեանի, Արտակ Մովսիսեանի աշխատու-

թիւնները եւ Հայաստանի Խորհր- դային Հանրապետարանի նիւթե- րը: Սակայն սրանք չեն խանգա- րում, որ Պօղոս Լազարեանը սան- ձագերծի իր պայծառ երեւակայու- թիւնը, նիւթերին յաղորդի իր անսահման հայրենասիրական զգա- ցումների խորհուրդն ու ջերմու- թիւնը, ընթերցողին համակի անմ- նացորդ, անսակարգ, անզիջում հա- յասիրութեամբ: Սա է վեհացնում խոհազրուութեան ինքնատիպ գրող Պօղոս Լազարեանին:

Գրքի մի շարք յօդուածներ կարող են դաս ու դպրոց դառնալ մեր դպրոցականների համար, ճա- նաչողական ու հայրենասիրութեան դասընթաց դառնալ մեր օրերի վա՜յ ընթերցողների բանակի հա- մար: Կարդացէ՛ք Նաիրի (էջ 175), Արամ-Արամէ (էջ 196), Արմինա- Ուրարտուի ճամբաներով (էջ 244), Հայ Անուան Ծագումը (էջ 300), Հայ Ժողովուրդի Կազմաւորումը (էջ 340) եւ մի շարք յօդուածները, որոնք ներծծուած են ճշմարտու- թեան խորհուրդներով, հայրենիքի ամրապնդման ու պահպանման ու- ժի ու կամքի հզորութեան հաստա- տումներով, ժողովուրդի ու անհա-

### ՍԱՐԱԴ



ՊՕՂՈՍ ՄՈՒՐԱՏԵԱՆ (Մնեալ՝ 1932 Սուրիա)

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ ամուսնոյն, հօր, մեծ հօր եւ հարազատին՝ ՊՕՂՈՍ ՄՈՒՐԱՏԵԱՆԻ մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, Հոկտեմբեր 6, 2012ին, յետ երկարատեւ հիւանդութեան: Յուղարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Երկուշաբթի, Նոյեմբեր 12, 2012ին, առաւօտեան ժամը 9:00ին, Hollywood Hills Forest Lawn գերեզմանատան, Old North (Red) Church մատրան մէջ, ապա թաղումը՝ նոյն գերեզմանատան մէջ:

- Սգակիրները՝ Այրին՝ Սրբուհի Մուրատեան
- Զաւակները՝ Մարտիկ եւ Հելլեն Մուրատեան
- Վազգէն եւ Գրիսդին Մուրատեան
- Ժիրայր եւ Լուսին Մուրատեան
- Յակոբ եւ Նայիրի Գուզուեան
- Թորները՝ Փոլ, Թամար, Թալին եւ Ալէքս Մուրատեաններ
- Վիգէն եւ Նիքոլ Մուրատեաններ
- Գրիգոր, Տարօն եւ Ալին Գուզուեաններ
- Եղբայրները՝ Փիլգանդ եւ Անթուանէթ Մուրատեան եւ ընտանիք (Սուրիա)
- Արամ եւ Անահիտ Մուրատեան եւ ընտանիք (Սուրիա)
- Քոյրը՝ Զապէլ Տէր Վարդանեան եւ ընտանիք (Սուրիա)

Եւ համայն Մուրատեան, Թերզեան, Լալօեան, Մօմճեան, Հապէշեան, Պօյատճեան, Գալաճեան, Պասամպագեան, Գուզուեան, Ժիվիլիգեան, Գուրուփաքի, Մարտիրոսեան, Թամամեան, Զորագեան, Տէր Վարդանեան, Օհաննէսեան, Խոտանեան եւ Մարլեան ընտանիքներն ու հարազատները:

տի միասնականութեամբ ու հա- մաձուլուածքով, որը եւ սիրոյ, հայրենասիրութեան անսպառ աղ- բիւրն է, եւ այդ անտեսանելի աղբիւրակին շունչ ու ոգի հաղոր- դողը Պօղոս Լազարեանն է, այս գեղեցիկ հատորի հեղինակը: Գիր- քը մօտ 400 էջ է, յօդուածները համալրուած- հարստացուած են մի քանի տասնեակ լուսանկարնե- րով, որոնք շատ արտայայտիչ են: Դրանք պատմական քարտէսներ

են, պատմիչների, գիտնականների դիմանկարներ են, ժայռաքանդակ- ներ են, հին քաղաքների փլատակ- ներ, մշակույթային ու եկեղեցական շինութիւններ են:

Պօղոս Լազարեանի «Արատ- տա-Արմինա, Հայկական Սրբազան Լեռնաշխարհ» հատորը (հր. 2012, Լոս Անճելոս, Art-Dezign) լաւ, գե- դեցիկ նուէր է Հայ ընթերցողին եւ հնագոյն պատմութեամբ հետաքրք- րուողների համար:

### ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

#### PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳԼԱՅՈՂ ԶԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգսի գեղատեսիլ եւ կից Լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւա- զան, ջաքուզի, թեմիսի խաղաղաշտ, կամաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

Մանրամասների համար հեռաձայնել՝ (818) 246-0125

ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

# 125 Վաճառք

## ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Կազմակերպութեամբ՝

Ս.Դ.Հ.Կ. 125 Ամեակի Յոբելիանական Մարմնի

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԾՈՒՄ ԵՒ ՅԱՏՈՒԿ ՅԱՅՏԱԳԻՐ  
ՅԱՐՈՒԹ ՅԱԿՈՒԲԵԱՆ • ԱՌՆՕ ՄԿՐՏՉԵԱՆ • ՇԻՐԱԶ  
ԷԼՍԻ ՓԷՐԼԻՎԱՆԵԱՆ • ԱՆԻ ԵՓՐԵՄԵԱՆ  
ԼԻԼԻԱ ՊԱՐԱԽՈՒՄԲ

ՀԵՌԱՏԵՍ  
ԽԻՉԱԽ  
ՅԱՆՁՆԱՌՈՒ  
2012  
1887  
Ամեակ  
**125**  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ  
ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Կիրակի, 18 Նոյեմբեր 2012 • Երեկոյեան ժամը 5:00-ին  
Glendale High School-ի հանդիսասրահէն ներս՝  
1440 E. Broadway, Glendale, CA 91205

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ